ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING

# 2019 | ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԿՍԱԾ | SINCE 2004

ԻՐԱԿԱՆ  ԼՈՒԾՈՒՄՆԵՐ
GENUINE SOLUTIONS

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING

# ԲԱՆԿԻ 15-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# 15-YEAR ACTIVITY REPORT OF THE BANK

## Բովանդակություն
## Contents


ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ / MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR ........ 6

01. ԲԱՆԿԻ ԵՎ ՆՐԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ / ABOUT BANK AND ITS STRATEGIC VALUES ........ 12

02. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ / MAIN DIRECTIONS OF THE BANK'S ACTIVITY ........ 15

Ներդրումային գործունեություն / Investment Services ........ 18

Վարկավորում / Lending ........ 22

03. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ / FUND ATTRACTION ........ 30

Ավանդային քաղաքականություն / Deposit Policy ........ 34

Համագործակցություն ֆինանսական կազմակերպությունների հետ / Cooperation with financial organizations ........ 36

Սեփական պարտատոմսերի թողարկում / Issuance of Own Bonds ........ 40

04. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ / CLIENTS ........ 43

05. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ / FINANCIAL INDICATORS ........ 48

06. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ / STAFF DEVELOPMENT ........ 54

07. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ / INFORMATION TECHNOLOGIES ........ 62

08. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ / RISK MANAGEMENT SYSTEM ........ 67

09. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ / SOCIAL RESPONSABILITY ........ 71

10. 2019Թ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ / SUMMARY OF 2019 INDICATORS AND FINANCIAL REPORTS ........ 74

2019թ-ի գործունեությունը թվերով / 2019 activities in numbers ........ 75

Ֆինանսական հաշվետվություններ / financial reports ........ 78

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑ / CALENDAR OF SIGNIFICANT EVENTS ........ 94

# ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ

# MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR



Հարգելի հաճախորդներ, գործընկերներ, աշխատակիցներ և բաժնետերեր

Մեծ ուրախությամբ և հպարտությամբ ցանկանում եմ ներկայացնել Բանկի 15 տարիների անցած ճանապարհը, քանի որ պատիվ եմ ունեցել ղեկավարել Բանկի գործունեությունը հիմնադրման պահից մինչ օրս և դեռ հիմնադրման ընթացքում ակտիվ դերակատարում եմ ունեցել Բանկի բիզնես մոդելի մշակման գործում: Մեր նախաձեռնությունն, ի դեպ, ՀՀ-ում եզակի էր այն առումով, որ բանկային համակարգում ստեղծվում էր բանկ, որի հիմնական առաքելությունը չէր ներառում մասսայական բանկային ծառայությունները, այլ հիմնվում էր միայն կորպորատիվ և ներդրումային ծառայությունների վրա: Նման ռազմավարության որդեգրման պայմաններում Բանկի գործունեության հեռանկարներին շատերն արդեն թերահավատորեն էին վերաբերվում: Սակայն անցած 15 տարիներն ապացուցեցին Բանկի ընտրած ռազմավարական մոդելի կենսունակությունը: Բանկին հաջողվեց կարճ ժամանակահատվածում՝ գրեթե մեկ տարվա ընթացքում, լուծել հիմնադրման հետ կապված խնդիրներն ինչպե՛ս տեխնիկական հագեցվածության, այնպե՛ս էլ պրոֆեսիոնալ թիմ ձևավորելու տեսանկյունից: Հատկանշական է, որ ի սկզբանե Բանկի գործունեությունը սկսել ենք ընդամենը 7 աշխատակցով: Այնուհետև կարողացանք արագ թևակոխել բիզնեսի զարգացման փուլ, որի ընթացքում Բանկին հաջողվեց տպավորիչ արդյունքներ գրանցել ինչպե՛ս ֆինանսական ցուցանիշների, այնպե՛ս էլ Բանկի դիրքի ամրապնդման և զարգացման առումով: Այս տարիների ընթացքում Բանկը ՀՀ բանկային համակարգում հանդես է եկել մի շարք նորարական նախաձեռնություններով: Բանկը առևտրային բանկերից առաջինը շուկայում հանդես եկավ ներդրումային ծառայություններով և կազմակերպեց կորպորատիվ հաճախորդների արժեթղթերի թողարկումներ, հաճախորդներին առաջարկվեցին կատարել ածանցյալ գործիքներով (ֆորվարդային, օպցիոն պայմանագրերով) գործառնություններ, նոր թափ հաղորդեց ֆակտորինգային ծառայություններին, թանկարժեք մետաղներով և առարկայազուրկ մետաղական հաշիվներով գործառնություններին և այլն:

Այս տարիներին Բանկն արձանագրել է գրեթե բոլոր ֆինանսական ցուցանիշների, ինչպես նաև հաճախորդների, աշխատակիցների

Dear customers, partners, employees and shareholders

With great pleasure and pride, I would like to present the Bank's 15-year journey, as I have been fortunate to lead the Bank since its inception until now and have played an active role in developing the Bank's business model. Our feature in Armenian banking sector has been our interest only in corporate and investment services not including mass banking services. In those conditions lots of people were skeptical of the Bank's prospects. However, the past 15 years have shown the viability of the Bank's strategic model. In a short period of time, the Bank managed to solve the problems related establishment, both in terms of technical equipment and the formation of a professional team. It is noteworthy that from the very beginning we started the Bank's activity with only 7 employees. Then we entered the stage of business development, during which the Bank managed to achieve impressive results, both in terms of financial indicators and the strengthening and development of the Bank's position. During these years, the Bank has come up with a number of innovative initiatives in the Armenian banking system. We were the first among commercial banks to offer investment services in the market, to organize the issuance of corporate customer securities, perform operations with derivative instruments (forward, option contracts), to activate factoring services, to offer transactions with precious metals and with subject-free metal accounts, etc.

During these years, the Bank has recorded a steady increase in almost all financial indicators, as well as in number of customers, employees, paid taxes, etc.

In addition to the positive indicators, the Bank has gone through a difficult period during these years, particularly in 2008-2015 in economic environment of the Republic of Armenia, the intensifying competition in banking system originated from international financial and economic crisis. Due to the targeted approaches, it has become possible to overcome many problems, provide a stable and favorable relationship with customers and partners. Due to the efforts of the Bank's shareholder, Board, governing bodies, employees and customer-oriented approaches, it has be-

թվի, վճարված հարկերի և այլ ցուցանիշների կայուն աճ:

Դրական ցուցանիշների արձանագրումից բացի՝ այս տարիների ընթացքում Բանկն անցել է բավականին բարդ և դժվարին ճանապարհ, մասնավորապես՝ 2008-2015թթ. ժամանակահատվածում միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված ՀՀ տնտեսության միջավայրում և բանկային համակարգի մշտապես խորացող մրցակցության և խստացող պայմաններում Բանկի բաժնետիրոջ, խորհրդի, գործադիր մարմնի և աշխատակիցների ջանքերի ու հաճախորդներին միտված մոտեցումների շնորհիվ հնարավոր է դարձել հաղթահարել բազում խնդիրներ և ապահովել հաճախորդների ու գործընկերների հետ կայուն և բարենպաստ փոխհարաբերություններ:

Բանկի կառավարման ընթացքում մշտապես որդեգրել ենք շուկայի միջավայրին համահունչ ռազմավարական և մարտավարական մոտեցումներ՝ ապահովելով Բանկի գործունեությանը կայունություն և անընդհատություն, ինչպես նաև հաճախորդներին՝ ժամանակակից և մրցունակ ծառայություններ:

15 տարիների ընթացքում գործընկերային հարաբերությունները մշտապես հանդիսացել են Բանկի հիմնական առաջնահերթություններից, ինչպես հաճախորդների, այնպես էլ ֆինանսական և այլ գործընկեր կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

Մենք ձևավորել ենք 3,000-ից ավելի գործուն և հեռանկարային հաճախորդների բազա: Մեզ համար առաջնայինը եղել է հաճախորդների կարիքների հնարավորինս արագ և արդյունավետ բավարարումը, որի արդյունքում անընդհատ մշակվել ու կատարելագործվել են մեր ծառայությունները և դրանց պայմանները:

Բանկին հաջողվել է ապահովել մի շարք առաջատար միջազգային և տեղական ֆինան-

come possible to overcome many problems and ensure stable and favorable relations with customers and partners.

During the management of the Bank, we have always adopted strategic and tactical approaches in line with the market environment, ensuring stability and continuity of the Bank's activities, as well as offering customers' modern and competitive services.

Over the 15 years, partnerships have always been one of the Bank's top priorities, both in terms of customers, financial and other partnerships.

We have created a database of more than 3,000 active and perspective customers. The priority of our work has been to meet the needs of our customers as quickly and efficiently as possible, as a result of which our services and conditions have been continuously developed and improved.

Along with all this, the Bank has managed to establish effective cooperations and gradually deepen it with a number of leading international and local financial organizations, in particular: European Bank of Reconstruction and Development (EBRD), Asian Development Bank (ADB), Factoring Chain International (FCI), European Investment Bank (EIB), responsAbility Investments AG, Export Insurance Agency (EIA), German-Armenian Fund (GAF), National Mortgage Company (NMC), Home for Youth, etc, to finance customers with various services and favorable conditions.

We have also registered many successful deals and results in this direction. It is worth mentioning that, as a result of the joint work of the Bank and EBRD, it became possible to refinance internal factoring transactions for the first time during the EBRD's activities. One of the successful examples is that within the scope of the Global Master Repurchase Agreement (GMRA), with the guearantee of Frontclear, the Bank im-




սական կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցություն, մասնավորապես՝ ՎԶԵԲ-ի, «Ասիական զարգացման բանկ»-ի, FCI միջազգային ֆակտորինգային ընկերության, Եվրոպական ներդրումային բանկի, responsAbility Investments AG ընկերության, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ հիմնարկի, «Ազգային հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների ու այլ կազմակերպությունների հետ: Ֆինանսական կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում նույնպես արձանագրել ենք բազում հաջողված գործարքներ և ստացված արդյունքներ: Արժանի է հիշատակել, որ Բանկին հնարավոր է դարձել ՎԶԵԲ-ի գործունեության ընթացքում առաջին անգամ վերաֆինանսավորել ներքին ֆակտորինգային գործարքները: Հաջողված օրինակներից է նաև Ֆրոնթքլիըր (Frontclear) ընկերության երաշխավորությամբ ՎԶԵԲ-ի հետ ՀՀ բանկային համակարգում առաջին անգամ կնքված պետական պարտատոմսերի ապահովությամբ հակադարձ ռեպո գործարքները:

plemented cross-currency repo transaction with the financing of EBRD and attracted funds covered by Armenian government USD denominated Eurobonds.

The Bank devoted special attention to its role in the Financial Market as mediation service provider for banks, non-bank financial institutions, pension funds' managers, insurance and investment companies, through offering various products in both RA and international financial markets, enabling investments in various financial instruments.

The Bank also actively cooperates with infrastructure organizations of financial market such as the Union of Banks of Armenia, ACRA Credit Bureau, Armenian Stock Exchange, "FINARM" Financial Markets Association, the American Chamber of Commerce in Armenia (AmCham) and other organizations to identify systemic problems and solve them.

During 15 years, one of the key figures has been the management of our staff, including the

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձրել ֆինանսական շուկայում բանկերի, վարկային կազմակերպությունների, կենսաթոշակային ակտիվների կառավարիչների, ապահովագրական ու ներդրումային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ առաջարկելով նրանց ծառայություններ ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում:

Բանկն ակտիվորեն համագործակցում է նաև ֆինանսական շուկայի ենթակառուցվածքային նշանակության կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Հայաստանի բանկերի միությունը, ԱՔՌԱ վարկային բյուրոն, Հայաստանի ֆոնդային բորսան, «ՖԻՆԱՐՄ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիան, Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում (AmCham) և այլ կազմակերպություններ, և մշտապես մասնակցում է համակարգային խնդիրների բացահայտմանը և դրանց լուծմանն ուղղված աշխատանքներին:

15 տարիների ընթացքում կարևոր տեղ են զբաղեցրել նաև մեր աշխատակազմի կառավարման, այդ թվում՝ աշխատակիցների ընտրության ու վերապատրաստման հարցերը:

selection and retraining of employees.

In order to ensure the continuous development of the Bank's activities, we have started the construction of a new head office and plan to complete it by the end of 2021. The new building of the Bank will be endowed with the most favorable territorial conditions for the provision of services and advanced technical technologies

In conclusion, I believe that our future is also promising and, we will continue to work with the same enthusiasm and determination, staying true to our principles and pursuing our strategic goals for the forthcoming years.

On behalf of the Bank staff, I would like to express my sincere gratitude towards our Customers, Partners, Board Members and Shareholders, for their trust and mutual beneficial cooperation.

At the same time, I would like to express my gratitude to the staff of ARMSWISSBANK for demonstrated professionalism and dedicated commitment.



Բանկի գործունեության շարունակական զարգացումն ապահովելու նպատակով ձեռնամուխ ենք եղել նոր գլխամասային գրասենյակի կառուցման աշխատանքներով և նախատեսում ենք այն ավարտին հասցնել 2021թ-ի վերջում: Բանկի նոր շենքն օժտված կլինի ծառայությունների մատուցման տարածքային առավել բարենպաստ պայմաններով և տեխնիկական առաջատար տեխնոլոգիաներով:

Ամփոփելով, կարծում եմ, որ մեր ապագան նույնպես խոստումնալից է, և մենք շարունակելու ենք աշխատել նույն եռանդով ու վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին ու հետամուտ լինելով հաջորդ տարիների մեր ռազմավարական նպատակների իրագործմանը:

Բանկի անձնակազմի անունից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր հաճախորդներին, գործընկերներին, Խորհրդին ու բաժնետերերին՝ Բանկին այս տարիների ընթացքում ցուցաբերած վստահության, աջակցության և փոխշահավետ համագործակցության համար:

Միաժամանակ հայտնում եմ իմ երախտագիտությունը Բանկի անձնակազմին՝ պրոֆեսիոնալ ու նվիրված աշխատանքի համար:

**Գևորգ Մաչանյան**

Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

**Gevorg Machanyan**

Chairman of the Directorate
Executive Director

# ԲԱՆԿԻ ԵՎ ՆՐԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# ABOUT BANK AND ITS STRATEGIC VALUES

01

Հիմնադրման պահին Բանկի միակ հիմնադիր բաժնետերն է հանդիսացել շվեյցարահայ գործարար, «Ֆրանկ Մյուլլեր Ուոչլանդ» հանրահայտ ընկերության հիմնադիր, սեփականատեր և գործադիր տնօրեն Վարտան Սիրմակեսը: Ներկայումս պարոն Վարտան Սիրմակեսը շարունակում է մնալ Բանկի 100% բաժնետոմսերի անուղղակի մասնակից:

31.12.2019թ-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են հանդիսանում «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» Ս.ա.ր.լ. առևտրային ընկերությունը՝ Բանկի սովորական բաժնետոմսերի 87.53%-ի մասնակցությամբ և «ՖՄՏՄ Դիստրիբյուշն» ՍՊԸ-ն՝ 12.47%-ի մասնակցությամբ:

Բանկն անցել է գրանցման երեք փուլ. այն հիմնադրվել է 15.09.2004թ-ին, ՀՀ ԿԲ-ում գրանցվել է 07.10.2004թ-ին և ստացել է բանկային գործունեության թիվ 84 լիցենզիան 25.02.2005թ-ին, այսինքն՝ Բանկը փաստացի գործունեություն սկսել է իրականացնել 2005 թվականից:

Հիմնադրման պահից Բանկն իր գործունեությունը սկսել է ՀՀ, ք. Երևան, Խանջյան 13/2 հասցեում տեղակայված գրասենյակում, իսկ 2009 թվականից շարունակել է իր գործունեությունը ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10 հասցեում տեղակայված գրասենյակում:

Բանկը մասնաճյուղեր չունի:

***Բանկի տեսլականն է.*** լինել ՀՀ-ում կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային ծառայություններ մատուցող առաջատար Բանկ՝ անձնակազմի պրոֆեսիոնալիզմի ու ճկունության, սպասարկման որակի շնորհիվ:

***Բանկի առաքելությունն է.*** բացահայտել հաճախորդների կարիքները՝ նրանց տրամադրելով միջազգային լավագույն փորձին համահունչ ֆինանսական լուծումներ:

During establishment of the Bank the sole founding shareholder was Vartan Sirmakes, a Swiss-Armenian businessman and philanthropist, founder, owner and executive director of the famous Frank Mueller Watchland Company. Currently, Mr. Vartan Sirmakes continues to be the beneficiary owner of 100% Bank's shares.

As of 31.12.2019, the shareholders of the Bank are "HVS Holding" S.a.r.l, which is the owner of 87.53% ordinary shares and "FMTM Distribution" LTD, which is the owner of 12.47% ordinary shares.

The Bank has passed three stages of registration. It was established on 15.09.2004, was registered by Central Bank on 07.10.2004 and received the banking license No. 84 in 25.02.2005. In other words, we have been operating since 2015.

Since its establishment, the Bank has started its activity in the office located at 13/2 Khanjyan Street, Yerevan, RA and since 2009 it has moved to another office located at 10 Vazgen Sargsyan Street.

The Bank does not have branches.

***Bank's vision:*** to be the leading corporate, investment and private bank in the Republic of Armenia due to professionalism and flexibility of our staff and high quality customer service.

***Bank's mission:*** to reveal our customers' needs by providing them with financial solutions in line with the best international practice.

Բանկի գործունեությունը հիմնված է հետևյալ հիմնարար արժեքների վրա.

- Պրոֆեսիոնալիզմ
- Գործընկերություն
- Հուսալիություն
- Ապահովություն
- Ազնվություն

Բանկում գործում են մի շարք կոլեգիալ մարմիններ՝ Խորհուրդ, Աուդիտ կոմիտե, Տնօրինություն, Վարկային կոմիտե, Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե, Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման խումբ և աշխատանքային այլ խմբեր:

The activities of the Bank are based on the following fundamental values:

- Professionalism
- Partnership
- Reliability
- Safety
- Integrity

The Bank has a number of collegial bodies:

Board, Audit Committee, Management, Investment Committee, Credit Committee, Assets and Liabilities Management Committee, Customer Relations Management Group and other working groups.

## ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## MAIN DIRECTIONS OF THE BANK'S ACTIVITY

02




## Գործընկերություն

Փոխշահավետ արդյունքների հասնելու նպատակով՝ մենք արժևորում ենք հաճախորդների և գործընկերների հետ երկարատև ու շարունակական համագործակցությունը:

Իր 15-ամյա գործունեության ընթացքում Բանկը շարունակել է գործունեությունը կորպորատիվ և ներդրումային ուղղություններով՝ ներդնելով միջազգային բանկային համակարգում ընդունված փրայվիթ բանկային (Private banking) տեխնոլոգիաներ:

Բանկը մշտապես աշխատանքներ է իրականացրել հաճախորդների անհատական կարիքների բացահայտման ուղղությամբ՝ ջանալով ապահովել հաճախորդների պահանջների բավարարման համար արդյունավետ ֆինանսական լուծումներ:

Տարեցտարի Բանկը համալրել և կատարելագործել է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող ծառայությունների շրջանակը և ներկայումս ապահովում է ծառայությունների լայն տեսականի՝ վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում, այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ներդրումային ծառայություններ, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն:

During 15 years activity, the Bank has continued its operations in corporate and investment directions, using private banking technologies adopted from international banking system.

The Bank has been constantly working on identifying customer needs and providing effective financial solutions that meet their requirements.

Year by year, the Bank has replenished and improved the range of services offered to corporate clients, and now provides payment and credit services, flexible deposit schemes, trade financing, alternative financing, factoring, forward, swap, option, investment services, financial consulting, etc.

## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ներդրումային գործունեությունը Բանկի ռազմավարական բիզնես ուղղություններից է: Բանկը կատարում է ներդրումներ պետական պարտատոմսերում և կորպորատիվ արժեթղթերում, ինչպես նաև հաճախորդներին առաջարկում է ներդրումային ծառայությունների համալիր փաթեթ:

Բանկը մշտապես առաջատար դիրք է գրավել ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում: Այն 2006-ից մինչև 2019թ-ը հանդիսացել է ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ:

31.12.2019թ-ի դրությամբ Բանկի արժեթղթերի պորտֆելը կազմել է շուրջ 154.5 մլրդ ՀՀ դրամ, որը Բանկի ակտիվների 54.6%-ն է:

## INVESTMENT SERVICES

Investment activities are Bank's strategic business directions, within the framework of which the Bank invests in government bonds and corporate securities, as well as offers customers a comprehensive package of investment services.

The Bank has always been active and has occupied a leading position in RA government bond market. From 2006 to 2019, the Bank was an Agent of the RA Government Bonds Market.

As of 31.12.2019, the portfolio of securities managed by the Bank amounted to about AMD 154.5 billion, which is 54.6% of the Bank's assets. Income from the securities portfolio was 66.7% of the Bank's total revenue in 2019.

## ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2005 - 2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ

## SECURITIES PORTFOLIO DYNAMICS FOR 2005 - 2019 AMD BILLION



Արժեթղթերի պորտֆելից ստացված եկամուտները կազմել են Բանկի 2019թ-ի ստացած ընդհանուր եկամուտների 66.7%-ը:

Բանկի արժեթղթերի պորտֆելը ՀՀ բանկային համակարգում ամենամեծն է: Ներդրումային բանկային ծառայությունների ոլորտում 2006 թվականին, որպես առաջին ՀՀ առևտրային բանկ, Բանկը ՀՀ կենտրոնական բանկից ստացել է արժեթղթերի շուկայում բրոքերային և պահառության գործունեությունների լիցենզիաներ:

Բանկն անընդհատ կատարելագործել և ընդլայնել է իր ներդրումային ծառայությունների փաթեթը և հաճախորդներին ներկայումս առաջարկում է արժեթղթերի բրոքերային, պահառուական, ռեեստրավարման, թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման, արժեթղթերի երկրորդային շուկայի իրացվելության կազմակերպման, ներդրումային խորհրդատվության ծառայություններ և այլն` հաճախորդներին ցուցաբերելով անհատականացված (tailor-made) մոտեցումներ:

31.12.2019թ-ի դրությամբ Բանկում բացված դեպո հաշիվներում հաշվառվում են հաճախորդների 53.2 մլրդ ՀՀ դրամի արժեթղթեր, որոնց ծավալը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը շուրջ 6%-ով: Բանկի կողմից պահառության վերցված արժեթղթերի ծավալը 31.12.2019թ-ի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների շուրջ 19%-ը: Հաճախորդների կողմից Բանկին պահառության հանձնած արժեթղթերը հիմնականում հանդիսանում են ամերիկյան, եվրոպական, ռուսական և հայկական պետական և կորպորատիվ արժեթղթեր:

Բանկի ներդրումային ծառայությունների օգտագործմամբ հաճախորդները ձևավորել և շարունակում են կառավարել արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելներ: Հաճախորդները Բանկի միջոցով ձեռք են բերում և կառավարում են ամերիկյան, եվրոպական, ռուսական և այլ երկրների ընկերությունների ու ներդրումային

The Bank's securities portfolio is the largest in the Armenian banking system. In 2006 the Bank was the first among commercial banks in Armenia to receive licenses from the Central Bank of Armenia for brokerage and custody activities in the securities market.

The Bank has continuously improved, expanded its investment services package, and now offers customers brokerage, custodial, registry, securities issuance and placement, management of securities liquidation in secondery market, investment advisory services, etc providing tailor-made approaches to customers.

As of 31.12.2019 there are customers' securitiers amounting AMD 53.2 billion in depo accounts of the Bank, the volume of which exceeds the indicator of the previous year by about 6%. As of 31.12.2019, the volume custodied securities is about 19% of the Bank's assets. Custodied securities are mainly American, European, Russian and Armenian  state and corporate securities.

With the use of Bank's investment services, customers form and continue to manage individual, collective and other types of portfolios. Through the Bank, customers acquire and manage shares, deposit receipts, government and corporate bonds, commodity futures of American, European, Russian, etc companies and investment funds, perform repurchase and foreign exchange transactions with foreign securities, cash and non-cash gold transactions, etc.

The Bank has provided customers with the opportunity to diversify their risks and manage cash flows through a variety of derivatives.

Since 2006, the Bank has been offering services to corporate clients for issuing and placing securities. In this regard, the Bank has implemented 22 securities issues, as a result of which about AMD 28 billion have been collected. The implementation of three public allocation of

հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական ու կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, կատարում են օտարերկրյա արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ և այլն:

Բանկը հաճախորդներին հնարավորություն է ընձեռել տարատեսակ ածանցյալ գործիքների միջոցով իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը և դրամական հոսքերի կառավարումը:

Դեռևս 2006 թվականից Բանկը կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ: Այս ուղղությամբ Բանկն իրականացրել է արժեթղթերի թողարկման 22 ծրագիր, որոնց արդյունքում հավաքագրվել է շուրջ 28 մլրդ ՀՀ դրամի դրամական միջոցներ: Հատկանշական է եղել «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման երեք ծրագրերի իրականացումը, որի արդյունքում Բանկը տեղաբաշխել է ավելի քանի 6.5 մլրդ ՀՀ դրամի բաժնետոմսեր: Այն իր ծավալներով և ներդրումների աշխարհագրությամբ բացառիկ է ՀՀ կապիտալի շուկայի պատմության մեջ: Արժեթղթերի տեղաբաշխումների շրջանակում Բանկի կողմից կիրառվել է միջազգային պրակտիկայում ընդունված տեխնոլոգիական այնպիսի լուծումներ, ինչպիսիք են երաշխավորված տեղաբաշխումը, տեղաբաշխողների սինդիկատի ձևավորումը, բորսայական աճուրդների միջոցով արժեթղթերի տեղաբաշխումը և այլն:

Արժեթղթերի բորսայական առևտրի իրացվելության բարձրացման նպատակով Բանկն առաջիններից է, որ հանդես է եկել շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքերի) ծառայություններով: 31.12.2019թ-ի դրությամբ Բանկը հանդիսանում է 7 թողարկողների 13 պարտատոմսերի ու 1 բաժնետոմսի շուկա ստեղծող և արժեթղթերի իրացվելիության ապահովման նպատակով Հայաստանի ֆոնդային բորսայի

"ARTSAKH HEK" OJSC shares was significant, as a result of which the Bank placed more than AMD 6.5 billion shares. With its volume and geography of investments, it is unique in the development of the RA capital market. Within the framework of securities placement, the Bank has used technological solutions adopted in international practice, such as guaranteed placement, formation of a placement syndicate, placement of securities through stock exchange auctions, etc.

In order to increase the liquidity of stock market, the Bank was the first to provide market-maker services. As of 31.12.2019 the Bank is the market-maker of 7 issuers' 13 bonds and 1 security and organizes bilateral quotations on the trading sessions of the Armenian Stock Exchange in order to ensure liquidity of securities. Most of the listed securities are bonds issued by Armenian commercial banks.

Being active in the securities market since 2015, the Bank initiated the placement of its own bonds. As of 31.12.2019, the Bank made 11 issues, and collected AMD 8 billion, USD 41 million and EUR 13 million. As of 31.12.2019, 2 editions have been repayed.

Throughout its operations, the Bank has been active in the short-term money market, to manage liquidity, or providing short-term financing to local and international partners using repo, swap instruments, interbank loans, and more.

The Bank took an active participation in the initiatives related to the reforms in the legislative field of the financial intermediation sphere of the RA securities market.

առևտրային նստաշրջաններում կազմակերպում է արժեթղթերի երկկողմանի գնանշումներ: Գնանշվող արժեթղթերի գերակշիռ մասը ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկվող պարտատոմսեր են:

Արժեթղթերի շուկայում ակտիվ գործառնություններ ծավալելով 2015թ-ից՝ Բանկը նախաձեռնեց սեփական պարտատոմսերի տեղաբաշխման ծրագրերի իրականացումը: Արդյունքում, 31.12.2019թ-ի դրությամբ Բանկն իրականացրել է 11 թողարկումներ, որոնց արդյունքում հավաքագրել է 8 մլրդ ՀՀ դրամի, 41 մլն ԱՄՆ դոլարի և 13 մլն եվրոյի չափով դրամական միջոցներ: 31.12.2019թ-ի դրությամբ երկու թողարկումները մարված են եղել:

Իր ողջ գործունեության ընթացքում Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում կարճաժամկետ դրամական շուկայում և իրացվելիության կառավարման նպատակով շուկայից ներգրավում կամ տեղական և միջազգային գործընկերներին տրամադրում է կարճաժամկետ ֆինանսավորում՝ օգտագործելով ռեպո, սվոպ գործիքներ, միջբանկային վարկեր և այլն:

Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ՀՀ արժեթղթերի շուկայի ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններին:

## ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Վարկավորման 15 տարիների գործունեությունը հիմնված է եղել կորպորատիվ վարկավորման վրա: Բանկը մշտապես իր վարկային քաղաքականության շրջանակում առաջնորդվել է հետևյալ արժեքներով. հաճախորդների պահանջմունքների առավելագույնս բավարարում, անհատական, արագ և ճկուն լուծումների ապահովում և ծառայությունների գրավչության պահպանում: Բանկը հաճախ համակցել է մի քանի վարկային գործիքներ կամ նախապես փոխարինել է վարկային մեկ գործիքը մյուսով՝ ելնելով հաճախորդի պահանջմունքներից, նպատակից, ժամկետայնությունից, մարման աղբյուրից և այլն:

Վարկային ներդրումների ֆինանսավորման աղբյուր են հանդիսացել ինչպես Բանկի սեփական ռեսուրսները, այնպես էլ միջազգային ու տեղական ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները:

## LENDING

The 15-year lending activities was based on corporate lending. Within the framework of its credit policy, the Bank has always been guided by the following values: maximum satisfaction of customer needs, provision of individual, fast and flexible solutions and maintenance of services' attractiveness. The Bank has often combined several credit instruments or replaced one credit instrument with another based on customer requirements, purpose, maturity, repayment source, and so on.

The sources of credit financing have been the Bank's own resources, as well as funds from international and local financial organizations.

## ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2005 - 2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ

## CREDIT PORTFOLIO DYNAMICS FOR 2005-2019 AMD BILLION



Բանկի վարկավորման հիմնական ուղղություններն են.

- Կորպորատիվ վարկավորում
- Նախագծերի ֆինանսավորում
- Արտահանման ֆինանսավորում և ֆակտորինգ
- Անհատական վարկավորում

The main directions of Bank's lending are:

- Corporate Loans
- Project Financing
- Export Financing and Factoring
- Individual Loans

## Կորպորատիվ վարկավորում

15 տարիների ընթացքում Բանկը մշտապես զարգացրել և համալրել է կորպորատիվ վարկավորման գործիքակազմը՝ շատ հաճախ ՀՀ բանկային համակարգում առաջարկելով նորարարական լուծումներ:

Կորպորատիվ վարկավորման հատվածում կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի գերակշիռ մասը, որը 2019թ-ի վերջի դրությամբ կազմել է շուրջ 59.8 մլրդ ՀՀ դրամ  կամ ընդհանուր վարկային պոտֆելի 62.3%-ը: 2018թ-ի տարեվերջի՝ 51.46 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ բիզնես վարկավորման պորտֆելը 2019թ-ին գրանցել է շուրջ 16.3% աճ:

Կորպորատիվ վարկերի պորտֆելում ընդգրկված են խոշոր և ՓՄՁ հաճախորդներին կապիտալ ներդրումների և շրջանառու միջոցների համալրման նպատակով, այդ թվում՝ էներգաարդյունավետության բարձրացման, առևտրի ֆինանսավորման, գյուղատնտեսական (պետական ծրագրերի շրջանակում) նպատակներով տրված վարկերը, վարկային գծերը, օվերդրաֆտները և այլն, բացառությամբ նախագծային ֆինանսավորման շրջանակում տրված վարկերի:

Կախված վարկավորման նպատակից՝ Բանկն առաջարկում է կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման գործիքներ:



## Corporate Loans

During 15 years, the Bank has continuously developed and supplemented its corporate financing tools, often offering innovative solutions in the Armenian banking system.

The majority of the Bank's loan portfolio is concentrated in this sector, which, at the end of 2019, amounted to about AMD 59.8 billion  or 62.3% of the total loan portfolio.



The corporate loan portfolio increased by 16.3% in 2019 compared to the indicator of the end of 2018, which was AMD 51.46 billion.

The corporate loan portfolio includes loans for large and SME clients for their capital investments, working capital, including energy efficiency, trade financing, agricultural (within the framework of government programs), credit lines, overdraft loans, etc., except loans granted within the scope of project financing.

Depending on the purpose of the loan, the Bank offers short-term, medium-term or long-term financing instruments.

## Նախագծերի ֆինանսավորում

Որպես բիզնեսի վարկավորման առանձին ուղղություն՝ մշտապես կարևորել ենք գործող բիզնեսի ընդլայման կամ նոր բիզնես մտահղացումների ծրագրերի իրագործումը: Հիմնական առանձնահատկությունն այն է, որ ֆինանսավորվում է ամբողջովին նոր բիզնես նախաձեռնությունը, որը դեռևս կարող է չունենալ գործունեության պատմություն: Նախագծերի ֆինանսավորման ևս մեկ առանձնահատկությունն այն է, որ ֆինանսավորումն իրականացնում ենք ավելի երկար ժամկետով՝ հաշվի առնելով հաճախորդների ֆինանսական հոսքերի առանձնահատկությունները: Բանկը նախագծային ֆինանսավորման համար առաջարկում է երկարաժամկետ վարկեր՝ մինչև 12 տարի մարման ժամկետով:

Անցած 15 տարիների ընթացքում Բանկը որոշ ոլորտներում ունեցել է զգալի արդյունք-

## Project Financing

As a separate direction of business lending, the Bank always considered the expansion of existing business or new business ideas. The main feature is that a completely new business initiative is funded, which may not yet have a business history of activity. The peculiarity of project financing is a longer period of time, taking into account the financial flows of customers. The Bank offers long-term loans for project financing for up to 12 years.

Over the past 15 years, the Bank has achieved unprecedented results in some areas, especially in the area of renewable energy financing. The Bank financed about 50 SHPPs and 50 solar stations. In addition, successful projects have been implemented in agriculture, construction and other sectors.

As of the end of 2019, the project financing



ներ, հատկապես վերականգնվող էներգիայի ֆինանսավորման ոլորտում: Բանկն իրականացրել է շուրջ 50 ՓՀԷԿ-երի և 50 արևային կայանների ֆինանավորում: Բացի այդ, հաջողված նախագծեր են իրականացվել գյուղատնտեսության, շինարարության և այլ ոլորտներում:

2019թ-ի վերջի դրությամբ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը կազմել է շուրջ 15.55 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի ավելի քան 16.2%-ը: 2018թ-ի տարեվերջի՝ 9.78 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը 2019թ-ին գրանցել է շուրջ 59.0% աճ:

2019թ-ի համար նախագծերի ֆինանսավորման ոլորտում չափազանց ակտիվ են եղել սեփական կարիքների և բիզնես նպատակով արևային կայանների նախագծերի ֆինանսավորման ծրագրերը: 2019թ-ին Բանկն այդ ուղղությամբ ֆինանսավորել է շուրջ 2.4 մլրդ ՀՀ դրամի վարկեր: Նմանատիպ ծավալների ապահովումը հնարավոր է դարձել KfW բանկի «Վերականգնվող էներգիայի զարգացման» ծրագրի և ՎԶԵԲ-ի «Էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակում մատչելի պայմաններով ծրագրային միջոցների հաշվին:

### Արտահանման ֆինանսավորում և ֆակտորինգ (ներքին և միջազգային)

Առևտրի ֆինանսավորումը և ֆակտորինգը Բանկի վարկային գործունեության կարևոր ուղղություններից են: Բանկն առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի ոլորտում շարունակում է մնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից: Որպես ասվածի վառ ապացույց արժանի է հիշատակել, որ 2019 թվականի մայիսի 7-ին Սարաևոյում կայացած ՎԶԵԲ-ի տարեկան ժողովում Բանկը ՎԶԵԲ-ի կողմից արժանացել է 2018թ-ի «Հայաստանի ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին:

portfolio amounted to about AMD 15.55 billion or more than 16.2% of the total loan portfolio. The project financing portfolio increased by 59% in 2019 compared to the indicator of the end of 2018, which was AMD 9.78 billion.

In 2019, financing of solar stations for own needs and business purposes have been extremely active. In 2019, the Bank financed loans of about AMD 2.4 billion. Such volumes were made with effortable resources under KfW's Renewable Renewable Energy Development Program and EBRD's Energy Efficiency Program.

### Export Financing and Factoring (Domestic and International)

Trade financing and factoring are one of the important directions of the Bank's lending activity. The Bank continues to be one of the leaders in the Armenian banking system in the field of trade financing and factoring. As a vivid proof of this, it is worth mentioning that at the EBRD Annual Meeting held in Sarajevo on May 7, 2019, the Bank was awarded “Most Active Bank in 2018 Armenia” by the EBRD.

In the field of trade financing, export financing is of key importance for the Bank.

Within the framework of export financing and factoring, the Bank has created a rich toolkit over the years, which allows customers to insure the financial and payment risks during export transactions. In the context of export financing, the Bank provides loans mainly without additional collateral and in different currencies, depending on the currency requirements of customers.



Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի համար առանցքային նշանակություն ունի արտահանման ֆինանսավորումը:

Արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի շրջանակում Բանկը տարիների ընթացքում ձևավորել է հարուստ գործիքակազմ, որը հնարավորություն է տալիս ապահովագրել հաճախորդներին արտահանման գործընթացում ֆինանսական և վճարումների ռիսկերից: Արտահանման ֆինանսավորման շրջանակում Բանկը վարկեր է տրամադրում հիմնականում առանց լրացուցիչ գրավային ապահովության և տարբեր արժույթներով՝ կախված հաճախորդների արժութային պահանջներից:

*Բանկը հաճախորդներին առաջարկում է.*

- ներքին ռեգրեսով ու առանց ռեգրեսի ֆակտորինգ,
- դեբիտորական պարտքի ֆինանսավորում,
- նախաարտահանման ֆինանսավորում,
- արտահանման և ներմուծման ֆակտորինգ (միջազգային ֆակտորինգ),
- ակրեդիտիվ, ինկասո և միջազգային բանկային երաշխիքներ:

Արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի ոլորտում Բանկը համագործակցում է ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի և այլ առաջնակարգ բանկերի հետ, անդամակցում է FCI (Factors Chain International) առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների ցանցին, ակտիվ համագործակցություն է ծավալում ՀԱԱԳ-ի հետ:

2019թ-ի վերջի դրությամբ արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆելը կազմել է 7.4 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով 2018թ-ի ցուցանիշը 42.6%-ով: Արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆելը կազմում է ընդհանուր վարկային պորտֆելի շուրջ



*The Bank offers customers*

- internal resource and non-resource factoring,
- financing of receivables,
- pre-export financing,
- export and import factoring (international factoring),
- letter of credit, bank guarantees and collections.

In the field of export financing and factoring, the Bank cooperates with the EBRD, ADB and other leading banks, is a member of leading factoring organizations FCI (Factors Chain International), and actively cooperates with the EIA.

As of the end of 2019, the total portfolio of export financing and factoring amounted AMD 7.4 billion, which increased of about 42.6% compared to the end of 2018. Export financing and factoring portfolio is about 7.7% of the total loan portfolio. At the same time, as the tools used in the export financing and factoring portfolio are short-term, it is interesting to consider the total volume of allo-

7.7%-ը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆելում օգտագործվող գործիքակազմը կրում է կարճաժամկետ բնույթ, հետաքրքրական է դիտարկել ընդհանուր տրամադրումների ծավալը, որը 2019թ-ին կազմել է շուրջ 20,995 մլն դրամ՝ 2018թ-ի համեմատ գրանցելով ավելի քան 69% աճ:

Ֆակտորինգային գործառնությունների ոլորտում տարիների ընթացքում Բանկի ներդրած ջանքերը պսակվել են հաջողությամբ և, հատկապես վերջին տարիներին, արձանագրվել է ցուցանիշների շեշտակի աճ: Հատկանշական է այն փաստը, որ 2015թ-ին ՎԶԵԲ-ն իր գործունեության ողջ ընթացքում առաջին անգամ Բանկի համար սահմանել է ներքին ֆակտորինգային գործառնությունների վերաֆինանսավորման սահմանաչափ:

2019թ-ի վերջի դրությամբ ֆակտորինգի պորտֆելը (ներառյալ դեբիտորական պարտքերի ֆինանսավորումը) կազմել է 5.3 մլրդ ՀՀ դրամ՝ 2018թ-ի տարեվերջի՝ 3.2 մլրդ ՀՀ դրամի համեմատ գրանցելով շուրջ 65.6% աճ: 2019թ-ի ընթացքում ֆակտորինգի ընդհանուր տրամադրումների ծավալը կազմել է շուրջ 14,996 մլն դրամ՝ 2018թ-ի համեմատ գրանցելով ավելի քան 87% աճ:

Արտահանման ֆինանսավորման ոլորտում դեռևս 2015թ-ից Բանկը հետևողականորեն զարգացրել է իր համագործակցությունը ՀԱԱԳ-ի հետ և գրանցել է փայլուն արդյունքներ՝ աջակցելով հայրենական արտադրողների արտահանման հնարավորությունների զարգացմանը: Բանկը մշտապես հանդիսացել է ՀԱԱԳ-ի ամենաակտիվ գործընկերը ՀՀ բանկային համակարգում: 2019թ-ի վերջի դրությամբ նախաարտահանման և հետարտահանման վարկերի պորտֆելը կազմել է շուրջ 2.1 մլրդ ՀՀ դրամ՝ 2018թ-ի տարեվերջի՝ 1.96 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ գրանցելով շուրջ 5.8% աճ:

cations, in 2019 amounted to about AMD 20.995 million, which increased of about 69% compared to the end of 2018.

The Bank's efforts over the years in the field of factoring operations have been successful, especially in recent years. It is noteworthy that in 2017, EBRD, first time in its whole activity, set a limit for refinancing of internal factoring operations for Bank.

As of the end of 2019, the factoring portfolio amounted to AMD 5.3 billion, which increased of about 65.6% compared to the end of 2018 (AMD 3.2 billion). The total provisioning of factoring in 2019 amounted to about AMD 14.996 million, which increased of about 87% compared to the end of 2018.

Since 2015, in the field of export financing, the Bank has been consistently developing cooperation with EIA and has achieved good results, supporting the development of export opportunities for domestic producers. The Bank has always been the most active partner of EIA in the banking system of Armenia. As of the end of 2019, the portfolio of pre-export and post-export loans amounted to about AMD 2.1 billion, which increased of about 5.8% compared to the end of 2018 (AMD 1.96 billion).

## Individual Lending

Not being a specialized in retail banking, the Bank, in order to ensure the completeness of the services, offers individual loans (mortgage, consumer and credit loans) to the owners, management staff and employees of Bank's corporate clients. In addition, the Bank is particularly interested in mortgage lending, which has been growing steadily for years.

The Bank offers customers mortgage loans for purchase, repair and construction of residential



## Անհատական վարկավորում

Մասնագիտացված չլինելով մանրածախ բանկային ծառայությունների շուկայում՝ Բանկը, ծառայությունների ամբողջականության ապահովման նպատակով, առաջարկում է անհատական վարկեր (հիփոթեքային, սպառողական և քարտային վարկեր) Բանկի կորպորատիվ հաճախորդների սեփականատերերին, ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին: Բացի այդ, Բանկն առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում նաև հիփոթեքային վարկավորման ոլորտում, որտեղ տարիներ շարունակ արձանագրել է կայուն աճ:

Բանկը հաճախորդներին առաջարկում է բնակելի անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման և կառուցման նպատակով հիփոթեքային վարկային գործիքներ: Հիփոթեքային վարկային գործիքները տրամադրվում են ինչպես հաստատուն, այնպես էլ փոփոխական տոկոսադրույքով մինչև 20 տարի մարման ժամկետով:

Դեռևս 2012թ-ից ՀՀ բանկային շուկայում առաջին անգամ Բանկը հանդես եկավ հիփոթեքային վարկի նախահաստատում պրոդուկտի ներդրման նախաձեռնությամբ և մինչև օրս այն հաջողությամբ առաջարկվում է հաճախորդներին:

Հիփոթեքային վարկավորման ոլորտում Բանկը համագործակցում է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման, բնակելի անշարժ գույքերի վերանորոգման նպատակով էներգաարդյունավետ վարկավորման ծրագրերի շրջանակում, «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակում: Բանկն առաջարկում է նաև հիփոթեքային վարկեր՝ սեփական միջոցներով:

2019թ-ի վերջի դրությամբ անհատական վարկային պորտֆելը (ներառյալ սպառողական վարկերը) կազմել է 11.77 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի շուրջ 12.2%-ը: 2018թ-ի տարեվերջի՝ 7.94 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ հիփոթեքային վարկային պորտֆելը 2019թ-ին գրանցել է շուրջ 48.2% աճ:

real estate. Mortgage loans are provided with both fixed and floating interest rates for up to 20 years tenor.

Since 2012, for the first time in Armenian banking system, the Bank has initiated the introduction of pre-approval of mortgage loan product, and until now it has been successfully offered to customers.

In the field of mortgage lending, the Bank cooperates with "National Mortgage Company" RCO CJSC for refinancing mortgage loans, renovation of residential real estate within the framework of energy efficient lending program, and with "Home for Youth" RCO CJSC for refinancing mortgage loans. The Bank also offers mortgage loans with its own resources. The Bank also offers mortgage loans with its own resources.

As of the end of 2019, the individual lending portfolio (including consumer loans) amounted to AMD 11.77 billion or about 12.2% of the total loan portfolio. It was increased of about 48.2% compared to the end of 2018 (AMD 7.94 billion).



# ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

# FUND ATTRACTION

03

Գործունեության ողջ ընթացքում Բանկի կառավարման մարմինները հատուկ ուշադրություն են դարձրել Բանկի բիզնես գործունեության զարգացման ու ընդլայնման համար մատչելի ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը:

15 տարիների ընթացքում Բանկը ներդրել և օգտագործում է միջոցների ներգրավման տարբեր գործիքներ՝ հիմնված դիվերսիֆիկացման սկզ– բունքների վրա (ըստ արժույթի, ժամկետների, գործիքների, հաճախորդների և այլն):

***Միջոցների ներգրավման հիմնական ուղղություններն են***

- իրավաբանական և ֆիզիկական անձանցից ցպահանջ ու ժամկետային ավանդների ներգրավում,
- միջազգային և տեղական ֆինանսական կազմակերպություններից ծրագրային միջոցների ներգրավում,
- սեփական պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման արդյունքում ժամկետային միջոցների հավաքագրում, ինչը թույլ է տալիս Բանկին կրճատել ներգրավված միջոցների ինքնարժեքը և իջեցնել ներգրավված միջոցների վաղաժամկետ վերադարձման ռիսկը՝ ապահովելով նաև պարտապանների դիվերսիֆիկացիա,
- ՀՀ միջբանկային շուկայից միջոցների ներգրավում՝ ռեպո ու հակադարձ ռեպո գործառնությունների միջոցով:

During Bank's activities, management has paid due attention to attracting available financial resources in order to develop and expend the Bank's business activities.

Within 15 years, the Bank has invested and used various instruments to attract funds based on the principles of diversification (by currency, terms, instruments, customers, etc.).

***The main directions of attracting funds are:***

- Attracting demand and term deposits from legal entities and individuals,
- Attracting funds from international and local financial organizations,
- Collecting term assets by issuance and placement of own bonds, which allows the Bank to reduce the cost of the attracted funds and reduce the risk on the early repayment of the funds, ensuring the diversification of debtors.
- Attracting funds from the RA interbank market through repo and reverse repo transactions.




## Պրոֆեսիոնալիզմ

Լավագույն արդյունքների հասնելու նպատակով՝ մեր փորձառու և առաջադեմ մասնագետները մշտապես բարձրացնում են իրենց մասնագիտական պատրաստվածությունը և փոխանակվում են իրենց գիտելիքներով և փորձով:

# ԱՎԱՆԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ավանդները հանդիսանում են ֆինանսական միջոցների ներգրավման ավանդական գործիք և Բանկն իր հիմնադրման պահից իր ավանդատու հաճախորդներին առաջարկում է ավանդային ծառայություններ:

Տարիների ընթացքում Բանկն անընդհատ կատարելագործել և ընդլայնել է ավանդային գործիքների տեսակներն ու ձևերը՝ կիրառելով ճկուն և ժամանակակից լուծումներ, որոնք ավելի համահունչ են խնայողությունների նկատմամբ ավանդատուների պահանջներին:

Ներկայումս Բանկն իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է հետևյալ ժամկետային ավանդատեսակները.

- Ստանդարտ ավանդ
- Փոփոխական ավանդ
- Կուտակային ավանդ

Միաժամանակ, ելնելով բիզնես մոդելի առանձնահատկությունից և հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցման անհրաժեշտությունից, Բանկը մշտապես սահմանել է ավանդի նվազագույն գումար:

Բանկում ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

# DEPOSIT POLICY

Deposits are a traditional means of attracting financial resources. Since its inception, the Bank has been offering deposit services to its depositors.

Over the years, the Bank has continuously improved and expanded the types of deposit instruments, using flexible and modern solutions, making them more in line with depositors' savings requirements.

Now the Bank offers 3 types of deposits to legal entities and individuals:

- Standard deposit,
- Variable deposit,
- Cumulative deposit:

At the same time, due to the peculiarity of the business model and the need to provide quality services to customers, the Bank has always set a minimum deposit amount.

Deposits of individuals in Bank are guaranteed by the Deposit Guarantee Fund of Armenia.

## ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԸ 2005-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՀՀ ՄԼՐԴ ԴՐԱՄ

## TERM DEPOSITS FOR 2005-2019 AMD BILLION



# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Բանկը տարեցտարի խորացնում է տեղական և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը ու այդ համագործակցության արդյունքում նոր և մատչելի վարկային լուծումներ է առաջարկում վարկային հաճախորդներին:

Ստորև ներկայացնում ենք Բանկի հիմնական գործընկերներին.

• ՎԶԵԲ, որի հետ համագործակցությունը շուրջ 10 տարվա պատմություն ունի: Այն ընդգրկում է բավականին լայն շրջանակ. ՓՄՁ վարկավորում, առևտրի ֆինանսավորում, էներգաարդյունավետություն ու վերականգնվող էներգետիկա և այլն:

Հատկանշական է, որ 2018թ-ին Բանկը ՎԶԵԲ-ի հետ համատեղ (Frontclear կազմակերպության երաշխավորությամբ) առաջին անգամ Հայաստանի բանկային համակարգում կնքել է պետական պարտատոմսերով 2.3 մլրդ ՀՀ դրամ ծավալով ռեպո պայմանագիր: Գործարքն իրականացվել է կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի (ICMA) կողմից ընդունված և միջազգային ֆինանսական շուկաներում արժեթղթերով ռեպո գործարքների կնքման գործընթացը կարգավորող գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի (GMRA) շրջանակում:

Ընդհանուր առմամբ, Բանկը ՎԶԵԲ-ի հետ իրականացրել է առևտրի ֆինանսավորման, ՓՄՁ և էներգաարդյունավետ նախագծերի վարկավորման ոլորտներում մի շարք վարկային ծրագրեր՝ ավելի քան 50 մլն ԱՄՆ դոլար ծավալով:

2014թ-ի հուլիսին ՎԶԵԲ-ի կողմից Բանկին տրվել է «Հաստատող Բանկ»-ի կարգավիճակ:

# COOPERATION WITH FINANCIAL ORGANIZATIONS

Year by year, the Bank deepens the cooperation with local and international financial organizations and as a result of it offers new and affordable credit solutions to customers.

Below are the main partners of the Bank.

• EBRD, 10 years of cooperation within the scope of SME lending, Trade financing, Energy efficiency, Renewable energy, etc. It is worth noting, that in 2018 the Bank and EBRD (guaranteed by Frontclear) for the first time in Armenian banking system signed a reverse repo agreement with state bonds in the amount of AMD 2.3 billion. The transaction took place under Global Master Repurchase Agreement (GMRA) adopted by International Capital Markets Association (ICMA) and regulating the process of concluding repo transactions with securities in international financial markets.

In total, the Bank, together with the EBRD, has implemented a number of loan projects in the areas of Trade Financing, SMEs and Energy Efficiency amounting more than USD 50 million.




In July 2014, the Bank has received the status of “Approving Bank” from EBRD.




*Համագործակցության ընթացքում Բանկը ՎԶԵԲ-ի կողմից արժանացել է մի շարք մրցանակների, որոնցից արժե առանձնացնել.*

*During the cooperation, the Bank was awarded a number of prizes by EBRD, from which are worth mentioning.*






- 2019թ-ի փետրվարին Բանկն արժանացել է «Փոփոխության գործակալ» անվանակարգում մրցանակի՝ սննդի ոլորտում կանաչ ներդրումների աջակցության համար: Բանկի կողմից ֆինանսավորումն իրականացվել է «Կովկասի էներգաարդյունավետության ծրագրի» շրջանակներում:

- In February 2019, the Bank was awarded the “Change Agent” nomination for supporting green investments in food sector. The financing was provided within the framework of the “Caucasus Energy Efficiency Program”.

---

- 2019թ-ի մայիսին Սարաևոյում կայացած ՎԶԵԲ-ի տարեկան ժողովում Բանկը արժանացել է «2018թ-ի Հայաստանի ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին:

- In May 2019 at EBRD Annual Meeting in Sarajevo, the Bank was awarded the “Most Active Issuing Bank in 2018 in Armenia” award.

---

- 2019թ-ի փետրվարին Բանկը մրցանակ է ստացել ՎԶԵԲ-ի և Բանկի միջև 2018թ-ի հունվարին կնքված գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի (GMRA) շրջանակներում որպես 6.6 մլրդ ՀՀ դրամի (13.5 մլն դոլարի) ռեպո գործարքների իրականացման երաշխավոր հանդես եկած ֆինանսական շուկաների զարգացման ոլորտում մասնագիտացված հոլանդական հանրաճանաչ Ֆրոնթքլիըր (Frontclear) ընկերության կողմից:

- In February 2019, the Bank awarded by Frontclear, well-known Dutch company specialized in the development of financial markets, for cross-currency repo transactions amounted AMD 6.6 billion (USD 13.5 million) within the scope of agreement signed between EBRD and ARMSWISSBANK in January 2018.

---

- KfW բանկ և Եվրոպական ներդրումային բանկ, որոնց հետ Բանկի համագործակցությունն իրականացվել է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ պետական հիմնարկի միջոցով: Բանկի համագործակցությունն ունի ավելի քան 12 տարվա պատմություն: Համագործակցության շրջանակն ընդգրկել է KfW բանկի վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ծրագրերի ու Եվրոպական ներդրումային բանկի գյուղատնտեսության և տուրիզմի զարգացման ծրագրերի տարբեր փուլերին Բանկի ակտիվ մասնակցությամբ: Բանկը մասնակցել է մի շարք ծրագրերի, որոնց միջոցով իրականացրել է ավելի քան 27 մլրդ ՀՀ դրամի վարկային ներդրումներ:

- KFW and European Investment Bank the cooperation with wich was carried out by German-Armenian Fund (GAF) Project Management Office. The cooperation has more than 12 years of history. The Bank cooperats with KFW within the scope of Renewable Energy, Energy Efficiency programs, and with EIB within the scop of different stages of Agriculture and Tourism program. The Bank has participated in a number of projects through which it has invested more than AMD 27 billion.

---

- Ասիական զարգացման բանկ, որի հետ Բանկը համագործակցում է դեռևս 2015թ-ից առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում և ներկայումս ունի հաստատված 5 մլն ԱՄՆ դոլարի վարկային սահմանաչափ:

- Asian Development Bank, cooperation since 2015 within the scope of Trade Financing program, currently has a credit limit of USD 5 million.

---

- 2019թ-ից համագործակցում է responsAbility Investments AG ակտիվների կառավարման առաջատար կազմակերպության հետ և մասնավոր հիմնադրամներից ներգրավել է 3 մլն ԱՄՆ դոլար և 5 մլն եվրո գումարի չափով վարկային միջոցներ: Ներգրավված միջոցներն ուղղվել են Բանկի վարկային ներդրումների ավելացմանը:

- Leading asset management company responsAbility Investments AG, cooperation since 2019. The Bank attracted USD 3 million and EUR 5 million loans from private funds. The funds were used to increase the Bank’s credit investments.

---

- 2010թ-ից համագործակցում է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման, էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և բնակարանային միկրովարկերի ծրագրերի շրջանակներում: Ներկայումս «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից Բանկի համար սահմանված է 2,000 մլն ՀՀ դրամի սահմանաչափ:

- “National Mortgage Company” RCO CJSC, cooperation since 2010 within the scope of mortgage loans refinancing, energy efficient renovation of residential real estate, micro financing. At present, “National Mortgage Company” RCO CJSC has set a limit of AMD 2,000 million AMD for the Bank.

---

- 2013թ-ից Բանկը համագործակցում է նաև «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ երիտասարդ ընտանիքներին տրվող հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակում: Ներկայումս «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի կողմից Բանկի համար սահմանված է 1,000 մլն ՀՀ դրամի սահմանաչափ:

- “Home for Youth” RCO CJSC, cooperation since 2013 within the framework of mortgage refinancing program provided to young families. At present, the “Home for Youth” RCO CJSC sets a limit of AMD 1,000 million for the Bank.

# ՍԵՓԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ

Հանդիսանալով ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակիցներից՝ Բանկը 2015թ-ից նախաձեռնեց նաև սեփական պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման ծրագրերի իրականացումը: 31.12.2019թ-ի դրությամբ Բանկի կողմից իրականացվել է պարտատոմսերի 11 թողարկում: Մանրամասները ներկայացված են ստորև.

Տեղաբաշխումների արդյունքում Բանկին հաջողվել է հավաքագրել 8 մլրդ ՀՀ դրամի, 41 մլն ԱՄՆ դոլարի և 13 մլն եվրոյի չափով դրամական միջոցներ: 31.12.2019թ-ի դրությամբ երկու թողարկումները մարված են եղել:

Թողարկված բոլոր պարտատոմսերը տեղաբաշխման ավարտից հետո ցուցակվել և շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում: Միաժամանակ, պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով Բանկն օգտվել է շուկա ստեղծողի ծառայություններից, ինչն ապահովել է Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջաններում պարտատոմսերի երկկողմանի գնանշումները: Արդյունքում, Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը շուկայում հանդիսանում են ամենաիրացվելի և ամենապահանջված պարտատոմսերից: Մասնավորապես՝ 2019թ-ին Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվել է թվով 156 գործարք՝ 2.2 մլն ԱՄՆ դոլար, 564.5 հազ եվրո, 1,932.7 մլն ՀՀ դրամ ծավալով:

# ISSUANCE OF OWN BONDS

Being one of the active participants of the RA Government and Corporate Securities Market, the Bank initiated as well as the implementation of its own bond issuance and placement since 2015. As of 31.12.2019, the Bank issued 11 bonds. Details are presented below.

As a result of allocations, the Bank managed to raise AMD 8 billion, USD 41 million and EUR 13 million. As of 31.12.2019, 2 issues have been repaid.

All issued bonds after the placement are listed in Armenian Stock Exchange. At the same time, in order to ensure the liquidity of the bonds, the Bank used the services of the market maker, which ensured the bilateral quotations of the bonds in the trading sessions of Armenian Stock Exchange. As a result, the bonds issued by the Bank are among the most popular and most demanded bonds on the market. In particular, in 2019, 156 deals worth USD 2.2 million, EUR 564.5 thousand, AMD 1,932.7 million were made at Armenian Stock Exchange with bonds issued by the Bank.

## ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 31.12.2019Թ-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

## DESCRIPTION OF BONDS ISSUED AND PLACED BY THE BANK AS OF 31.12. 2019

| Թողարկման արժույթ<br>Issue value | | Տեղաբաշխման ծավալ<br>Issue volume | Ժամկետայնություն<br>Duration volume | Արժեկտրոնային եկամտաբերություն<br>Coupon | Մարման ժամկետ<br>Maturity date | Անվանական ժամկետ<br>Nominal Value |
|---|---|---|---|---|---|---|
| **2015 ԹՎԱԿԱՆ** | | | | | | |
| SWISB 1 | $ | 2,000,000 | 3 տարի \| years | 7.50% | 16.04.2018 | 1,000 |
| SWISB 2 | $ | 3,000,000 | 4 տարի \| years | 8.00% | 16.04.2019 | 1,000 |
| SWISB 3 | $ | 5,000,000 | 5 տարի \| years | 8.50% | 27.04.2020 | 1,000 |
| **2017 ԹՎԱԿԱՆ** | | | | | | |
| SWISB 4 | $ | 10,000,000 | 7 տարի \| years | 6.75% | 15.06.2024 | 100 |
| SWISB 5 | € | 10,000,000 | 6 տարի \| years | 5.00% | 15.06.2023 | 100 |
| SWISB 6 | ֏ | 2,000,000,000 | 4 տարի \| years | 12.75% | 15.06.2021 | 50,000 |
| **2018 ԹՎԱԿԱՆ** | | | | | | |
| SWISB 7 | ֏ | 3,000,000,000 | 5 տարի \| years | 11.50% | 24.05.2023 | 50,000 |
| SWISB 8 | $ | 6,000,000 | 7 տարի \| years | 6.50% | 23.05.2025 | 100 |
| SWISB 9 | $ | 10,000,000 | 6 տարի \| years | 6.00% | 22.11.2024 | 100 |
| **2019 ԹՎԱԿԱՆ** | | | | | | |
| SWISB 7 | ֏ | 3,000,000,000 | 5 տարի \| years | 11.50% | 24.05.2023 | 50,000 |
| SWISB 2A | $ | 5,000,000 | 6 տարի \| years | 6.50% | 02.05.2025 | 100 |
| SWISB 2B | € | 3,000,000 | 4 տարի \| years | 4.00% | 02.05.2023 | 100 |



ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

CLIENTS

# 04



## Հուսալիություն

Լինելով հուսալի գործընկեր՝ նախընտրում ենք համագործակցել հուսալի գործընկերների հետ՝ հիմնված կայուն հիմքերի վրա:

Բանկի գործունեության զարգացմանը զուգընթաց մեծանում է Բանկի հաճախորդների բազան: Բանկում սպասարկվում են իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք օգտվում են Բանկի տարբեր ծառայություններից:

31.12.2019թ-ի դրությամբ հաճախորդների թվաքանակը կազմել է 3,076, որից 1,944-ը՝ ֆիզիկական անձ, 1,060-ը՝ իրավաբանական անձ և 72-ը՝ անհատ ձեռնարկատեր: Իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 37% և 63%: Բանկը ծառայություններ է մատուցում նաև ոչ ռեզիդենտ հաճախորդներին, որոնց թիվը 31.12.2019թ-ի դրությամբ կազմել է 273:

Բանկի հաճախորդները թիրախավորված են ըստ հետևյալ խմբերի.

- Ավանդային հաճախորդներ
- Վարկային հաճախորդներ
- Ֆակտորինգային հաճախորդներ
- Ներդրումային հաճախորդներ
- Վճարահաշվարկային հաճախորդներ
- Քարտային հաճախորդներ

Հաճախորդների հետ փոխհարաբերությունները կառուցվում են երկարաժամկետ և փոխշահավետ համագործակցության հիման վրա: Հաճախորդները կարող են օգտվել Բանկի ծառայություններից միայն Բանկում բանկային հաշիվ ունենալու դեպքում:

Բանկը հաճախորդներին մատուցում է միջազգային բանկային պրակտիկայում ընդունված և հաճախորդի պահանջները բավարարող «թեյլոր մեյդ» ծառայություններ՝ դրսևորելով անհատական մոտեցում և պարբերաբար զարգացնելով ու ընդլայնելով ծառայությունների շրջանակը:

Բանկի կողմից կիրառվող «Ճանաչիր Հաճախորդիդ» սկզբունքը և անհատական սպասարկումը նպաստում են թափանցիկ և փոխշահավետ հարաբերությունների ձևավորմանը ու բարենպաստ միջավայր ստեղծելուն:

Հաճախորդների ժամանակը խնայելու և արագ սպասարկելու նպատակով Բանկը ներդրել և զարգացրել է սպասարկման ժամանակակից լուծումներ, մասնավորապես՝ հաճախորդներն օգտվում են «Բանկ-հաճախորդ», «Ինտերնետ բանկ», «Մոբայլ բանկ», «SMS-ինֆո» ծրագրային միջոցներից:

Along with the development of the Bank's activities, client base is growing. The Bank serves legal entities and individuals who use various services.

As of 31.12.2019, the number of customers was 3,076, 1,944 of which were individuals, 1,060 were legal entities and 72 were individual entrepreneurs. The share of legal entities and individual customers was 37% and 63%, respectively. The Bank also provides services to non-resident customers, the number of which as of 31.12.2019 was 273.

The Bank's customers are targeted by the following groups:

- Deposit customers
- Lending customers
- Factoring customers
- Investment customers
- Payment customers
- Card customers

Customer relations are built on long-term, mutually beneficial cooperation. Customers can use the Bank's services only if they have an account in the Bank.

The Bank provides tailor-made services to customers in accordance with international banking practice, meeting individual requirements, developing and regularly expanding the range of services.

The Bank's "Know Your Customer" principle and personal services help to create a transparent and mutually beneficial relationship and favorable environment.

In order to save customer time and provide quick services, the Bank has developed modern service solutions, in particular, customers use "Bank-Customer", "Internet Bank", "Mobile Bank", "SMS-Info" softwares.



# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

# FINANCIAL INDICATORS

05

Իր 15-ամյա գործունեության ընթացքում Բանկը, տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների աճով պայմանավորված, ձևավորել է զուտ շահույթի կայուն աճի դինամիկա: Վերջինս Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տարեցտարի բազմազանեցման, ակտիվացման և բարելավման գործընթացների արդյունք է:

2019 թվականին Բանկը ձևավորել է շուրջ 8.5 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Շահույթի մեծությամբ Բանկը զբաղեցրել է 4-րդ տեղը 17 ՀՀ առևտրային բանկերի միջև և գեներացրել է բանկային համակարգի ընդհանուր շահույթի շուրջ 11.5%-ը:

ՀՀ բանկային համակարգում ROE և ROA ցուցանիշներով Բանկը մշտապես զբաղեցրել է առաջատար դիրքեր և 2019թ-ը ևս բացառություն չի եղել, մասնավորապես՝ ROE ցուցանիշը կազմել է 16.94%, իսկ ROA ցուցանիշը 3.32%: 2019թ-ին Բանկը ROE և ROA ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցրել է համապատասխանաբար 1-ին և 4-րդ պատվավոր տեղերը՝ համաձայն Արմինֆո գործակալության 20.03.2020թ-ի թիվ 101 տարեկան վերլուծական հաշվետվության:

ՀՀ բանկային համակարգում Բանկը մշտապես առաջնային դիրքերում է հանդես եկել «Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ»-ի և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ»-ի որակական ցուցանիշների մեծություններով: Այդ ավանդույթը շարունակվել է նաև 2019թ-ին և այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 190.4 և 73.1 մլն ՀՀ դրամ:

During its 15 years of operation, the Bank, due to the growth of interest and non-interest income, has created a stable profit growth. The latter is the result of diversification, activation and improvement of the services provided by the Bank.

In 2019, the Bank generated a net profit of about AMD 8.5 billion. In terms of profit, the Bank ranked 4th among 17 commercial banks in Armenia and generated about 11.5% of Armenian banking system total profit.

The Bank has always been in the leading position in Armenia banking system in terms of ROE and ROA and 2019 was no exception. In 2019, the Bank ranked 1st and 4th in terms of ROE and ROA, respectively, according to the annual analytical report No. 101, 20.03.2020 of Arminfo agency.

In Armenian banking system, the Bank has always been in the forefront with the qualitative indicators “Income per employee” and “Profit per employee”. This tendency continued in 2019 as well and these figures amounted to AMD 190.4 million and AMD 73.1 million, respectively.

## ՇԱՀՈՒՅԹԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2005-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ

## PROFIT DYNAMICS FOR 2005-2019 AMD MILLION




Շահույթի կայուն աճը և բաժնետոմսերի նոր տեղաբաշխումների միջոցով կանոնադրական կապիտալի համալրումը հանգեցրել են Բանկի ընդհանուր կապիտալի կայուն աճին:

The steady growth of profit and the replenishment of statutory capital through new shares have led to a steady increase in the total capital of the Bank.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2005-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ

## TOTAL CAPITAL DYNAMICS FOR 2005-2019 AMD BILLION




Իր ողջ գործունեության ընթացքում Բանկի ակտիվները նույնպես ցուցաբերել են կայուն աճի դինամիկա: Ակտիվներում մշտապես գերակշռել են ներդրումներն արժեթղթերում (հատկապես՝ պետական պարտատոմսերում) և տեղաբաշխված միջոցները՝ վարկային գործիքներում:

Throughout its operations, the Bank's assets have also shown stable growth dynamics. Investments in securities (especially government bonds) and funds allocated in credit instruments have always dominated assets.

## ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2005-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ

## ASSETS DYNAMICS FOR 2005-2019 AMD BILLION




Իր 15-ամյա գործունեության ընթացքում Բանկի ծառայությունների ընդլայնմանը զուգահեռ կայուն կերպով աճել են նաև Բանկի պարտավորությունները, որոնց կազմի և կառուցվածքի դիվերսիֆիկացմանն ու ներգրավվող ռեսուրսների ինքնարժեքի նվազեցմանն ուղղված աշխատանքները գտնվել են Բանկի մշտական ուշադրության կենտրոնում: Շարունակաբար քայլեր են ձեռնարկվել տեղական ու միջազգային ֆինանսական կառույցների հետ առկա համագործակցության խորացման և ֆինանսական նոր գործիքներով, այդ թվում՝ պարտատոմսերի թողարկման շնորհիվ, միջոցների ներգրավման ծավալների ավելացման ուղղությամբ:

During 15 years, in parallel with the expansion of the Bank's services, the Bank's liablities have steadily increased, and the Bank has always focused its efforts to diversify liabilities' structure and reduce the cost of attracted resources. Continuous steps have been taken to deepen existing cooperation with local and international financial institutions and to use new financial instruments, including issuance of bonds, to increase funding volume.

ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ
LOAN PORTFOLIO

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼ
SECURITY PORTFOLIO

ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ
OTHER ASSETS

## ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2005-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ

## LIABILITIES DYNAMICS FOR 2005-2019 AMD BILLION




15 տարվա ընթացքում Բանկը գրանցել է վճարված հարկերի կայուն աճի դինամիկա և 2019թ-ի վերջի դրությամբ հանդիսանում է ՀՀ 1000 խոշոր հարկատուներից 64-րդը՝ համախառն վճարելով 2,885 մլն դրամի հարկեր:

Over 15 years, the Bank has registered a dynamic growth of paid taxes and as of the end of 2019, the Bank was the 64th out of 1000 largest taxpayers in Armenia, paying AMD 2,885 million taxes.

# ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

# STAFF DEVELOPMENT

06

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ԸՆՏԱՆԻՔ-ը, թերևս ամենահզոր գաղափարներից մեկն է, որի շուրջ համախմբված են բոլորը: Այսօր Բանկի թիմում կան շուրջ 150 աշխատակից: Մինչդեռ 15 տարի առաջ Բանկի հիմնադրման ժամանակ Բանկի աշխատանքները սկսել են 7 աշխատակցով:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը մարդկանց համախումբ է, ովքեր կիսում են ընդհանուր արժեքները, մարդիկ, ովքեր հավատարիմ են Բանկի նպատակներին ու որդեգրած քաղաքականությանը:

Բանկի մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում Բանկն իր 15-ամյա գործունեության ողջ ընթացքում ապավինել է առաջադեմ, որակյալ և փորձառու մասնագետների ներգրավման, աշխատակիցների շարունակական վերապատրաստման, ընդհանուր զարգացման, կորպորատիվ մշակույթի տարածման ու առողջ թիմի պահպանման սկզբունքներին և մոտեցումներին:

Բանկն իր աշխատակիցների հետ փոխհարաբերությունները կառուցում է երկարատև համագործակցության և փոխադարձ հարգանքի հիման վրա:

Գիտակցելով պրոֆեսիոնալ անձնակազմի կարևորությունը՝ Բանկը միշտ հոգացել է նրանց վերապատրաստման, խրախուսման, կարիերայի աճի, պրոֆեսիոնալիզմի բարձրացման մասին:

Միևնույն ժամանակ, Բանկի աշխատակիցներն էլ աչքի են ընկնել հմտություններով, պրոֆեսիոնալիզմով, նախաձեռնություններով և թիմային աշխատանքի ունակություններով: Բանկի բազմաթիվ աշխատակիցներ մասնակցել են ՀՀ տարածքում և դրանից դուրս կազմակերպված ուսումնական տարբեր ծրագրերի, այդ թվում՝ սեմինարների, կոնֆերանսների և միջազգային գործընկեր կազմակերպությունների կողմից կազմակերպվող առցանց (on-line) դասընթացների՝ փորձի ու գիտելիքների փոխանակման նպատակով:

“ARMSWISSBANK FAMILY” is perhaps one of the most powerful ideas we all have. Today we have about 150 employees in our team. Meanwhile, 15 years ago, during the establishment of the Bank, the Bank started its work with 7 employees.

ARMSWISSBANK is a group of people who share common values, people who are loyal to the goals of the Bank and the adopted policy.

In the field of human resource management the Bank throughout its 15 years of operation rely on advanced, qualified and experienced professionals involvement, ongoing training, maintenance of common development, dissemination and healthy corporate culture, team principles and approaches.

The Bank builds relationships with its employees on the basis of long-term cooperation and mutual respect.

Realizing the need for professional staff, the Bank have always taken care of their training, encouragement, career growth, and professionalism.

At the same time, the Bank’s employees have been distinguished by their skills, professionalism, initiative and teamwork skills. Many employees of the Bank participated in the exchange of experience and knowledge of online courses organized by various partner educational programs, including seminars, conferences and international partner organizations in the territory of the Republic of Armenia. It is worth mentioning that at the annual general meeting held in Warsaw in 2014, the EBRD awarded the Bank the certificate of “Excellent Academic Progress in the Trade Finance Program”. The latter was based on the fact that 5 employees of the Bank were included in the list of the top 25 participants of the EBRD Trade Finance Awards in 2014. Many employees who have made excellent progress in various training programs have participated in a number of reputable foreign banks and training programs at local organizations.




**Ազնվություն**

Մենք հոգում ենք մեր բարի համբավի մասին, այդ իսկ պատճառով բարձր ենք գնահատում վստահությունը և գործնական էթիկան:

Տեղին է հիշատակել, որ դեռևս 2014թ-ին Վարշավայում կայացած տարեկան ընդհանուր ժողովին ՎԶԵԲ-ը Բանկին շնորհեց «Առևտրի ֆինանսավորման ծրագրում ակադեմիական գերազանց առաջադիմություն» հավաստագիրը: Վերջինիս համար որպես հիմք է հանդիսացել այն, որ Բանկի 5 աշխատակիցներ 2014թ-ին ընդգրկվել են EBRD Trade Finance մրցանակաբաշխության լավագույն 25 մասնակիցների շարքում:

Տարբեր ուսումնական ծրագրերում գերազանց առաջադիմություն ցուցաբերած բազում աշխատակիցներ մասնակցել են մի շարք արտասահմանյան հեղինակավոր բանկերում և կազմակերպություններում տեղում վերապատրաստման ծրագրերի:

Մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով Բանկը մշտապես խրախուսել է աշխատակիցների մասնակցությունը ACCA, CFA և որակավորման բարձրացման միջազգային այլ հայտնի ծրագրերին, որոնց մասնակցության արդյունքում Բանկի մի շարք աշխատակիցներին շնորհվել է ACCA և CFA որակավորումներ:

Միջազգային և տեղական հեղինակավոր կազմակերպությունների կողմից կազմակերպվող շատ կոնֆերանսներին և թեմատիկ քննարկումներին, որպես բանախոսներ հրավիրվել են Բանկի տարբեր աշխատակիցներ որոնք պատվով ներկայացրել են Բանկը, նրա անցած ուղին և կուտակած փորձը:

31.12.2019թ-ի դրությամբ Բանկում աշխատում են 150 աշխատակիցներ, որոնցից.

- Բոլորն ունեն բարձրագույն կրթություն,
- Հինգ աշխատակից ունի գիտությունների թեկնածուի և մեկը՝ գիտությունների դոցենտի աստիճան,
- Երկու աշխատակից ունի CFA միջազգային որակավորում, հինգ աշխատակից ստացել է FCI 1-ին մակարդակի որակավորում, չորս աշխատակցի շնորհվել է ACCA որակավորում,
- ՀՀ բանկային համակարգում Բանկը մշտապես առաջնային դիրքերում է հանդես եկել աշխատակիցների գործունեությունը բնութագրող այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են. «Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ» և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ» ցուցանիշների մեծություններով: Այդ ավանդույթը շարունակվել է նաև 2019թ-ին և այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 190.4 և 73.1 մլն ՀՀ դրամ:

The Bank has always encouraged employees to participate in ACCA, CFA and other recognized international qualification improvement programs for the purpose of permanent professional development, and a number of Bank employees have been awarded ACCA and CFA qualifications.

At various international conferences and thematic discussions organized by international organizations, various employees of the Bank were invited as speakers, and they presented the Bank with honor, its past path and the experience gained.

As of 31.12.2019, the Bank employs 150 employees, of which:

- All employees have higher education,
- Five employees have a PhD and an Associate Professor
- Two employees have CFA international qualification, five employees have received FCI 1st level qualification, four employees have been awarded ACCA qualification
- In the banking system of the Republic of Armenia, the Bank has always been in the forefront of the indicators characterizing the activities of employees, such as: "earning per employee" and "profit per employee".

This tradition continued in 2019 and those figures amounted to AMD 190.4 million and AMD 73.1 million, respectively.

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 2005-2019թթ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

## NUMBER OF EMPLOYEES FOR 2005-2019




ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՔԱՆԱԿ | AVERAGE NUMBER OF EMPLOYEES







Բանկը հոգ է տանում նաև աշխատակիցների սոցիալական բարեկեցության ուղղությամբ, մասնավորապես՝ յուրաքանչյուր տարի իրականացնում է բոլոր աշխատակիցների առողջության ապահովագրություն և պարգևատրում է աշխատակիցներին ամուսնանալու կամ երեխա ունենալու կապակցությամբ:

Մեր աշխատակիցները, բացի իրենց մասնագիտացված առօրյա աշխատանքից, Բանկը ներկայացնում են նաև այլ ասպարեզներում: Ձևավորել ենք շախմատային և ֆուտբոլային պատրաստված թիմեր, որոնք տարբեր մրցաշարերում հանդես են եկել ըստ արժանվույն: Բացի այդ, կարևորելով թիմային աշխատանքի ամրապնդման գաղափարը և նպատակ ունենալով ավելի հետաքրքիր դարձնել աշխատակիցների ծանրաբեռնված աշխատանքային առօրյան, արդեն մի քանի տարի է ինչ Բանկում կազմակերպվում է «Ամենախելացին» ինտելեկտուալ թիմային խաղը, որի ընթացքում աշխատակիցները ցուցաբերում են փայլուն գիտելիքներ, ճկուն միտք, նախաձեռնողականություն և համախմբվածություն:

The Bank also takes care of the social welfare of employees; in particular, each year provides health insurance for all employees and rewards employees for getting married or having children.

Our employees represent the Bank also in other areas. There are chess and football teams that have played well in different tournaments.

In addition, with the idea of strengthening teamwork and aiming to make the workload of employees more interesting, the Bank's "Smartest" intellectual team game has been organized for several years, during which employees show brilliant knowledge, flexible thinking, initiative and unity.

As well, the employees have always been happy to participate in the financing of many social programs organized by the Bank.

"ARMSWISSBANK FAMILY" is one of our greatest achievements, which we have created through joint efforts and years of experience.

This is our Bank, a place where we start and

Աշխատակիցները մշտապես սիրով իրենց մասնակցությունն են ունեցել նաև Բանկի կողմից կազմակերպվող բազում սոցիալական ծրագրերի իրականացմանը:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ԸՆՏԱՆԻՔ-ը մեր կարևորագույն ձեռքբերումներից է, որը կերտել ենք համատեղ ջանքերով, տարիների փորձով:

Սա Մեր Բանկն է. վայր՝ որտեղ տարիներ շարունակ սկսում և ավարտում ենք մեր աշխատանքային օրը: Վայր, որտեղ ամենօրյա քրտնաջան աշխատանքի շնորհիվ կերտվում է պատմություն:

end our working day for years. A place where daily hard work makes history.

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

# INFORMATION TECHNOLOGIES

07



Բանկն իր գործունեության սկզբից ևեթ կարևորել է տեխնիկական հագեցվածության և տեղեկատվական կարիքների ապահովման հարցերը ու շարունակական աշխատանքներ է տանում նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ՝ ինչպես Բանկի կողմից առաջարկվող ծառայությունները դյուրին դարձնելու, այնպես էլ տեղեկատվական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Բանկը մշտապես կատարելագործում է ՏՏ ենթակառուցվածքները՝ ապահովելով տեղեկատվության ամբողջականությունը, ենթակառուցվածքների աշխատանքների անընդհատությունը, ինչպես նաև նոր համակարգերի ժամանակին տեղադրումն ու կիրառումը:

ՏՏ ոլորտում կատարված աշխատանքների արդյունքում հնարավոր է դարձել Բանկի հաճախորդներին առաջարկել առցանց ծառայությունների լայն գործիքակազմ, ինչպիսիք են՝ «Բանկ-Հաճախորդ», «Ինտերնետ-Բանկ», «Մոբայլ բանքինգ», «Մոբայլ թոքեն», «SMS ինֆո» ծառայություններ, արժեթղթերով գործառնությունների կատարման էլեկտրոնային հարթակներ և այլ գործիքներ:

Բանկում ներդրված ՀԾ-Ինտերնետ Բանկ համակարգը հնարավորություն է տալիս Բանկի հաճախորդներին հեռահար սպասարկվել Բանկում: Ըստ այդմ, հաճախորդների սպասարկման հարմարավետությունը բարձրացնելու նպատակով Բանկը համագործակցում է ՀՀ-ում գործող հիմնական վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ՝ ակնթարթային դրամային փոխանցումների ոլորտում: Այն թույլ է տալիս անվտանգ օգտվել բանկային ծառայություններից՝ առանց Բանկ այցելելու:

Առաջնորդվելով անվտանգության ժամանակակից պահանջներով՝ հատուկ ծրագրային միջոցներով կատարվում է հաճախորդների, նրանց դրամական փոխանցումների մոնիթորինգի և ռիսկերի ավտոմատ գնահատում ու տեղեկացում:

Since the beginning of its activity, the Bank has been working on the issues of technical equipment and information needs and is continuously working on the introduction of new technologies both in terms of making the services offered by the Bank easier and providing information security.

The Bank is constantly improving IT infrastructure, ensuring the integrity of information, the continuity of infrastructure work, as well as the timely installation and use of new systems.

As a result of the work done in the field of IT, it has become possible to offer a wide range of online services to the Bank's customers, such as "Bank-Customer", "Internet Bank", "Mobile Banking", "Mobile Token", "SMS Info" services and electronic securities transactions platforms and other tools.

The AS-Internet Banking system introduced in the Bank allows the Bank's customers to be served remotely in the Bank. According to it, in order to increase the convenience of customer service, the Bank cooperates with the organizations providing basic payment and settlement services in Armenia in the field of instant money transfers. It allows you to securely use banking services without visiting the Bank.

Guided by modern security requirements, special software is used to automatically assess and inform customers and their money transfer monitoring and risk risks.

The Bank is guided by internationally accepted standards when implementing security measures. In particular, the Bank has introduced and continuously improved a number of internal information security acts, confirmed the competence of users in the systems, monitored the provision of them to users, constantly monitored information systems and performed the necessary analysis.

In order to ensure the uninterrupted operation



## Ապահովություն

Մենք հաճախորդների համար ստեղծել ենք և շարունակում ենք պահպանել «Վստահելի Բանկի» իմիջը՝ հավաստիացնելով մեր Բանկի կայունությունը և շարունակական բնականոն աճը:

Բանկը անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ներդնելիս առաջնորդվում է միջազգայնորեն ընդունված ստանդարտներով: Մասնավորապես, Բանկում ներդրվել և շարունակ կատարելագործվում են տեղեկատվական անվտանգությանը վերաբերող մի շարք ներքին ակտեր, հաստատվել են օգտագործողների իրավասությունները համակարգերում և վերահսկվում է դրանց տրամադրումն օգտագործողներին, մշտապես մոնիթորինգի են ենթարկվում տեղեկատվական համակարգերն ու կատարվում անհրաժեշտ վերլուծություններ:

Հաճախորդներին մատուցվող ծառայությունների անխափան աշխատանքն ապահովելու և Բանկի տվյալների հասանելիությունը բարձրացնելու նպատակով, Բանկում և Բանկից դուրս օգտագործվում են սերվերային մի քանի հարթակներ:

ՏՏ անվտանգության բարձր մակարդակը ստուգելու նպատակով Բանկը պարբերաբար պատվիրում է իրականացնել ՏՏ համակարգերի և ցանցերի ներթափանցման փորձի թեստավորում: Տվյալ թեստավորումներն իրականացվում են միջազգային ամենահայտնի ընկերությունների կողմից:

Օգտագործելով ՏՏ ժամանակակից լուծումները՝ Բանկն անդամակցում է մի շարք տեղական, ինչպես նաև միջազգային վճարային և տեղեկատվական համակարգերի. մասնավորապես Reuters Wealth Manager ու Bloomberg համակարգերում, որտեղ Բանկի կողմից գնանշվում են ՀՀ դրամը, հիմնական արտարժույթները, ՀՀ պետական պարտատոմսերը և ՀՀ կորպորատիվ արժեթղթերը:

of the services provided to the customers, in order to increase the availability of the Bank's data, several server platforms are used in the Bank and outside the Bank.

In order to check the high level of IT security, the Bank regularly orders the testing of the penetration of IT systems and networks. These tests were performed by the most famous international companies.

Using temporary IT solutions, the Bank is a member of a number of local, as well as international payment and information systems in particular Reuters Wealth Manager and Bloomberg, where the Bank rates the Armenian dram, major currencies, RA government bonds and RA corporate securities.

# ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

# RISK MANAGEMENT SYSTEM

08

15-ամյա գործունեության ընթացքում, հիմնվելով գործող օրենսդրության պահանջների և միջազգային ու սեփական կուտակած փորձի վրա, Բանկն անընդհատ կատարելագործում է ռիսկերի կառավարման համակարգը: Բանկը կիրառում է «Պաշտպանության երեք գծեր» (Three lines of defence) մոդելը, ըստ որի «առաջին գիծը» հանդիսանում է եկամտաստեղծ օղակը, որի գործառույթները կարգավորվում են ներքին իրավական ակտերով: «Երկրորդ գիծը» ներկայացնում են ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման ստորաբաժանումները, որոնք պարբերաբար իրականացնում են ռիսկերի նկատմամբ վերահսկողություն և ռիսկերի վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացնում Բանկի ղեկավարությանը: «Երրորդ գիծը» ներկայացնում է Ներքին աուդիտի ստորաբաժանումը, որը անկախ և օբյեկտիվ գնահատումներ և հավաստումներ է ներկայացնում Բանկի խորհրդին և ղեկավարությանը էական ռիսկերի վերաբերյալ:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումն ամենօրյա հսկողություն է իրականացնում ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունների նկատմամբ:

Համապատասխանության ապահովման ստորաբաժանումն իրականացնում է Բանկի համապատասխանության ռիսկի բացահայտում, կառավարում, մոնիթորինգ և ՓԼԱՖ-ի դեմ պայքարի գործառույթի ամենօրյա իրականացում:

Խորհրդի կողմից հաստատված երկարաժամկետ ու տարեկան աշխատանքային ծրագրերի համաձայն, Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է Բանկի գործունեության առավել ռիսկային ոլորտների աուդիտ: Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքներն առավել արդյունավետ է դարձնում Բանկի Խորհրդի անդամներից ձևավորված աուդիտ կոմիտեն, որը պարբերաբար քննարկում է Ներքին աուդիտի հաշվետվություններն ու ներքին աուդիտի աշխատանքների բարելավմանը վերաբերող հարցեր:

Համակարգի արդյունավետությունն ապահովվում է ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատման ու փաստաթղթավորման առկայության, ինչպես նաև համադրումների կիրառման շնորհիվ:

Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Բանկում կիրառվում են մի շարք հիմնարար սկզբունքներ.

- Ներդրումային որոշումների ընդունման կոլեգիալ եղանակը, ռիսկերի բացահայտման, վերլուծության և գնահատման համար ռիսկերի կառավարման մոդելների ու տարրերի կիրառումը, աշխատատեղերում իրավասությունների և պարտականությունների տարանջատումը, գործառնությունների իրականացումը առնվազն «երկու անձի» սկզբունքով, ռիսկային գործառնությունների համար սահմանաչափերի որոշումն ու հետևումը, ռիսկային ակտիվների դիվերսիֆիկացիան, հնարավոր կորուստների ծածկման համար պահուստների ձևավորումը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց՝ ապահովագրության միջոցով, երբ դրանց նվազեցման օգուտները գերազանցում են գնահատված ծախսերը կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է և այլն:

- Սթրես-թեստավորման համակարգի կիրառում, որը պարունակում է տարբեր հավանական սցենարներ և գնահատում է իրավիճակների ազդեցությունը Բանկի շահույթի և հիմնական տնտեսական նորմատիվների վրա:

- Գործառնական ռիսկի նվազեցման նպատակով ապահովագրության փաթեթի կիրառում, որն իր մեջ ներառում է բանկային ռիսկերի համապարփակ, էլեկտրոնային ու համակարգչային հանցագործության և մասնագիտական պատասխանատվության բաժինները: Բանկի կողմից ձեռք է բերվում նաև շենքի և գույքի ապահովագրություն:

During its 15 years of operation, based on the requirements of the current legislation and the international and own experience gained, the Bank is constantly improving its risk management system. The Bank uses the “Three lines of defense” model, according to which the “first line” is the revenue-generating circle, the functions of which are regulated by domestic legal acts. The “second line” is presented by the risk management and compliance departments, which regularly monitor the risks and present the reports of risks to the Bank’s management. The “third line” is represented by the Internal Audit Department, which provides independent and objective assessments and assurances to the Bank’s Board and management of significant risks.

The risk management unit exercises daily control over operations that involve financial risks.

The Compliance Division identifies, manages, monitors and implementation of the Bank’s compliance with its daily routine.

According to the long-term and annual work plans approved by the Board, the Bank’s Internal Audit Department carries out audits of the Bank’s most risky areas of activity. The work of the Internal Audit Department is made more effective by the Audit Committee formed by the members of the Bank’s Board, which regularly discusses the Internal Audit reports and the issues related to the improvement of the internal audit work.

The efficiency of the system is ensured by the clear separation and documentation of competencies and responsibilities between the subdivisions, as well as the application of comparisons.

In order to effectively manage risks, a number of basic principles are applied in the Bank:

- The collegial way of making investment decisions, the use of risk management models and elements for risk detection, analysis and evaluation, the separation of competencies and responsibilities in the workplace, the implementation of operations based on the principle of “at least two people”, the creation of reserves for the year, the transfer of risk through third party insurance, when the benefits of their reduction exceed the estimated costs or their reduction is practically impossible, etc.

- The use of a stress-testing system that incorporates a variety of possible scenarios and assesses the impact of situations on the Bank’s profit and core economic standards.

- Application of an insurance package to reduce operational risk, which includes comprehensive banking, electronic and computer crime and professional liability departments. The Bank also insures the building and the property.

The General Supervision of Risk Management in the Bank is carried out by the Board, the Executive Director, the collegial bodies established on the basis of the principles of corporate governance.



Ռիսկերի կառավարման ընդհանուր վերահսկողությունը Բանկում իրականացնում են Խորհուրդը, Գործադիր տնօրենը և կորպորատիվ կառավարման սկզբունքների հիման վրա ստեղծված կոլեգիալ մարմինները՝ Տնօրինություն, Վարկային, Գործունեության համապատասխանության հսկման և Ակտիվների ու պասիվների կառավարման կոմիտեները:

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## SOCIAL RESPONSABILITY

09





Բանկի և աշխատակազմի համար առօրյա մասնագիտական գործունեությունից բացի առանցքային նշանակություն ունեն նաև սոցիալական պատասխանատվությունը և հասարակական նշանակության խնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնությունները:

Այս ամբողջ տարիների ընթացքում Բանկը հանդես է եկել բազում սոցիալական և բարեգործական նախաձեռնություններով, որոնք ուղղված են եղել մշակութային, սոցիալական, կրթական և այլ բնույթի խնդիրների ու միջոցառումների ֆինանսավորմանը:

In addition to the day-to-day professional activities of the Bank and its staff, social responsibility and initiatives aimed at solving social problems are of key importance.

Throughout these years, we have come up with many social and charitable initiatives aimed to finance cultural, social, educational, etc. issues and events.







# 2019Թ-Ի ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# SUMMARY OF 2019 INDICATORS AND FINANCIAL REPORTS

10

## 2019Թ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

## 2019 ACTIVITIES IN NUMBERS

| Հիմնական ցուցանիշներ | 2019 | 2018 | Փոփոխություն |
|---|---|---|---|
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ | 282,149 | 230,405 | 22.5% |
| Վարկային պորտֆել /ներառյալ՝ ֆակտորինգ/ | 96,612 | 73,630 | 31.2% |
| Արժեթղթերի պորտֆել | 154,518 | 131,481 | 17.5% |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 222,145 | 187,562 | 18.6% |
| Ավանդային պորտֆել | 120,840 | 93,895 | 28.7% |
| Թողարկված պարտատոմսերի պորտֆել | 32,489 | 27,173 | 19.6% |
| ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | 59,735 | 42,843 | 39.4% |
| Շահույթ | 8,528 | 5,054 | 68.7% |
| ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ /ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ/ | 146 | 135 | 8.1% |
| ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ | 3,076 | 2,707 | 13.6% |
| ROA | 3.32% | 2.53% | 31.2% |
| ROE | 16.94% | 11.77% | 43.9% |
| Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթը (մլն ՀՀ դրամ) | 190.4 | 152.6 | 24.8% |
| Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթը (մլն ՀՀ դրամ) | 73.1 | 46.9 | 55.9% |
| Բանկում պահառության վերցված արժեթղթեր | 53.2 | 50.2 | 6.0% |




**Առաքելություն**

Մեր առաքելությունն է բացահայտել հաճախորդների կարիքները՝ նրանց տրամադրելով միջազգային լավագույն փորձին համահունչ ֆինանսական լուծումներ:

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# FINANCIAL REPORTS

## Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետիրոջը.

### *Կարծիք*

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ, դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### *Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

### *Աուդիտի առանցքային հարցեր*

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

### *Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ*

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4.4-ում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ ծանոթագրություն 37.1-ում:
Ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի ձևավորումը համարվում է աուդիտի առանցքային հարց՝ հաճախորդներին տրված վարկերի նշանակալի լինելու, ինչպես նաև արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով: Տարբեր դատողությունների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ակնկալվող պարտքային կորուստների գծով



## Independent auditor's report

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

To the shareholders of "ARMSWISSBANK" CLOSED JOINT STOCK COMPANY

### *Opinion*

We have audited the financial statements of "ARMSWISSBANK" CLOSED JOINT STOCK COMPANY (the "Bank"), which comprise the statement of financial position as of 31 December 2019, and the statement of profit or loss and other comprehensive income, statement of changes in equity and statement of cash flows for the year then ended, and notes to the financial statements, including a summary of significant accounting policies.

In our opinion, the accompanying financial statements give a true and fair view of the financial position of the Bank as of 31 December 2019 and of its financial performance and its cash flows for the year then ended in accordance with International Financial Reporting Standards ("IFRSs").

### *Basis for Opinion*

We conducted our audit in accordance with International Standards on Auditing ("ISAs"). Our responsibilities under those standards are further described in the Auditor's Responsibilities for the Audit of the Financial Statements section of our report. We are independent of the Bank in accordance with the International Ethics Standards Board for Accountants' Code of Ethics for Professional Accountants (the "IESBA Code") together with the ethical requirements that are relevant to our audit of the financial statements in the Republic of Armenia, and we have fulfilled our other ethical responsibilities in accordance with those ethical requirements. We believe that the audit evidence we have obtained is sufficient and appropriate to provide a basis for our opinion.

### *Key Audit Matters*

Key audit matters are those matters that, in our professional judgment, were of most significance in our audit of the financial statements of the current period. These matters were addressed in the context of our audit of the financial statements as a whole, and in forming our opinion thereon, and we do not provide a separate opinion on these matters.

### *Allowance for expected credit loss*

Refer to note 4.4 of the financial statements for a description of the accounting policies and to note 37.1 for an analysis of credit risk.

Expected credit loss allowance was considered as a key audit matter due to significance of loans to customers as well as the subjectivity of assumptions underlying the impairment assessment. Applying different judgments and assumptions can lead to significantly different results of the expected credit loss allowance, which may have a material effect on the Bank's financial results.
Key areas of judgment included the interpretation of the requirements to determine impairment under application of IFRS 9, which is reflected in the Bank's expected credit loss model, the identification of exposures with a significant deterioration in credit quality, assumptions used in the expected credit loss model such as the financial condition of the counterparty, expected future cash flows and forward looking macroeconomic factors and the need to apply additional overlays to reflect current or future external factors that are not appropriately captured by the expected credit loss model.

պահուստի գնահատման և ձևավորման էականորեն տարբեր արդյունքների, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ Բանկի ֆինանսական արդյունքների վրա:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք պատշաճ կերպով հաշվի չեն առնվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

- Ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ:

- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության նկատմամբ վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, վարկային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը:

- Գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի նկատմամբ վերահսկողությանհամապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը՝ ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը:

- Ստուգվել է Բանկի՝ պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերի հակվածությունը տարբեր փուլերում դասակարգելու հիմնավորվածությունը:

- Ռիսկերի որոշակի ընտրանքի համար ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը:

- Գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա, և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ:

- Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրամատչելի տեղեկատվությունը:

- Ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացվել ընթացակարգեր՝ վարկային որակի էական վատթարացման ռիսկերի ժամանակին բացահայտելու և անհատապես գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկը գնահատելու նպատակով:

- Ստուգվել է 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի հաշվարկում ընդգրկված վարկերի, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Ստուգվել են կիրառված մոդելների տեսական հիմքերը, և թեստավորվել է դրանց մաթեմատիկական ամբողջականությունը:

- Արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով վերանայվել է նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա տեղին լինելը և նման տվյալների նկատմամբ վերահսկողության ու կառավարման մեխանիզմը:
- Մեր ՏՏ ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ փորձառություն պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել):

- Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

With respect to impairment methodology, our audit procedures comprised the following:

- We read the Bank’s IFRS 9 based impairment provisioning policy and compared it with the requirements of IFRS 9.

- We assessed the design and tested the operating effectiveness of relevant controls over the data used to determine the impairment reserve, including transactional data captured at loan origination, ongoing internal credit quality assessments, storage of data and interfaces to the expected credit loss model.

- We assessed the design and tested the operating effectiveness of relevant controls over the expected credit loss model, including model build and approval, ongoing monitoring/validation, model governance and mathematical accuracy.

- We checked the appropriateness of the Bank’s determination of significant increase in credit risk and the resultant basis for classification of exposures into various stages.

- For a sample of risk exposures, we checked the appropriateness of the Bank’s staging.

- We assessed and tested the material modeling assumptions as well as overlays with a focus on the key modeling assumptions adopted by the Bank and sensitivity of the provisions to changes in modeling assumptions.

- For forward looking assumptions used by the Bank’s management in its expected credit loss calculations, we held discussions with management and corroborated the assumptions using publicly available information.

- We examined a sample of risk exposures and performed procedures to evaluate the timely identification of exposures with a significant deterioration in credit quality and expected loss calculation for exposures assessed on an individual basis.

- We checked the completeness of loans, off-balance sheet items, investment securities, placements and other financial assets included in calculation of allowances for expected credit loss as of 31 December 2019. We understood the theoretical soundness and tested the mathematical integrity of the models applied.

- For data from external sources, we understood the process of choosing such data, its relevance for the Bank, and the controls and governance over such data;

- We involved our IT specialists in areas that required specific expertise (i.e. data reliability and the expected credit loss model).

- We assessed the accuracy of the disclosures in the financial statements.

### *Այլ տեղեկատվություն*

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի տարեկան հաշվետվությունը 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

### *Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ

### *Other information*

Management is responsible for the other information. The other information comprises the information included in the annual report of the Bank for the year ended 31 December 2019, but does not include the financial statements and our auditor's report thereon. The annual report is expected to be made available to us after the date of this auditor's report.

Our opinion on the financial statements does not cover the other information and we will not express any form of assurance conclusion thereon.

In connection with our audit of the financial statements, our responsibility is to read the other information identified above when it becomes available and, in doing so, consider whether the other information is materially inconsistent with the financial statements or our knowledge obtained in the audit, or otherwise appears to be materially misstated.

### *Responsibilities of Management and Those Charged with Governance for the Financial Statements*

Management is responsible for the preparation and fair presentation of the financial statements in accordance with IFRSs, and for such internal control as management determines is necessary to enable the preparation of financial statements that are free from material misstatement, whether due to fraud or error.

In preparing the financial statements, management is responsible for assessing the Bank's ability to continue as a going concern, disclosing, as applicable, matters related to going concern and using the going concern basis of accounting unless management either intends to liquidate the Bank or to cease operations, or has no realistic alternative but to do so.

Those charged with governance are responsible for overseeing the Bank's financial reporting process.

### *Auditor's Responsibilities for the Audit of the Financial Statements*

Our objectives are to obtain reasonable assurance about whether the financial statements as a whole are free from material misstatement, whether due to fraud or error, and to issue an auditor's report that includes our opinion. Reasonable assurance is a high level of assurance, but is not a guarantee that an audit conducted in accordance with ISAs will always detect a material misstatement when it exists. Misstatements can arise from fraud or error and are considered material if, individually or in the aggregate, they could reasonably be expected to influence the economic decisions of users taken on the basis of these financial statements.

As part of an audit in accordance with ISAs, we exercise professional judgment and maintain professional skepticism throughout the audit. We also:

- Identify and assess the risks of material misstatement of the financial statements, whether due to fraud or error, design and perform audit procedures responsive to those risks, and obtain audit evidence that is sufficient and appropriate to provide a basis for our opinion. The risk of not detecting a material misstatement resulting from fraud is higher than for one resulting from error, as fraud may involve collusion, forgery, intentional omissions, misrepresentations, or the override of internal control.
- Obtain an understanding of internal control relevant to the audit in order to design audit procedures that are appropriate in the circumstances, but not for the purpose of expressing an opinion on the effectiveness of the Bank's internal control.

- Evaluate the appropriateness of accounting policies used and the reasonableness of accounting estimates and related disclosures made by management.

- Conclude on the appropriateness of management's use of the going concern basis of accounting and, based on the audit evidence obtained, whether a material uncertainty exists related to events or conditions that may cast significant doubt on the Bank's ability to continue as a going concern. If we conclude that a material uncertainty exists, we are required to draw attention in our auditor's report to the related disclosures

ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Բանկին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունները:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տրամադրում ենք հավաստիացում, որ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք մեր բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և, որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց ներկայացված հարցերից մենք առանձնացնում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հանրային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում մենք որոշում ենք, որ տվյալ հարցերը չպետք է ներկայացվեն աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրանց ներկայացման հետ կապված բացասական հետևանքներն ավելի շատ կլինեն, քան դրանց ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Անկախ աուդիտի առաջադրանքի պատասխանատուն հանդիսանում է Արմեն Հովհաննիսյանը:

Արմեն Հովհաննիսյան

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն
Առաջադրանքի պատասխանատու

08 մայիսի 2020թ.

in the financial statements or, if such disclosures are inadequate, to modify our opinion. Our conclusions are based on the audit evidence obtained up to the date of our auditor's report. However, future events or conditions may cause the Bank to cease to continue as a going concern.

- Evaluate the overall presentation, structure and content of the financial statements, including the disclosures, and whether the financial statements represent the underlying transactions and events in a manner that achieves fair presentation.

We communicate with those charged with governance regarding, among other matters, the planned scope and timing of the audit and significant audit findings, including any significant deficiencies in internal control that we identify during our audit.

We also provide those charged with governance with a statement that we have complied with relevant ethical requirements regarding independence, and to communicate with them all relationships and other matters that may reasonably be thought to bear on our independence, and where applicable, related safeguards.

From the matters communicated with those charged with governance, we determine those matters that were of most significance in the audit of the financial statements of the current period and are therefore the key audit matters. We describe these matters in our auditor's report unless law or regulation precludes public disclosure about the matter or when, in extremely rare circumstances, we determine that a matter should not be communicated in our report because the adverse consequences of doing so would reasonably be expected to outweigh the public interest benefits of such communication.

The engagement partner on the audit resulting in this independent auditor's report is Armen Hovhannisyan.

Armen Hovhannisyan

Chief Executive Officer of ''Grant Thornton''
CJSC/ Engagement Partner

8 May 2020

# Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | 2019 | 2018 |
|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | 22,701,678 | 18,252,054 |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | (14,143,305) | (10,873,540) |
| Զուտ տոկոսային եկամուտներ | 8,558,373 | 7,378,514 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | 253,808 | 235,298 |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | (131,698) | (122,542) |
| Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ | 122,110 | 112,756 |
| Զուտ առևտրային եկամուտ | 294,804 | 312,143 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման գծով զուտ օգուտ | 4,272,379 | 1,695,643 |
| Այլ եկամուտներ | 272,157 | 113,702 |
| Արժեզրկման ծախս | (768,784) | (1,505,539) |
| Անձնակազմի գծով ծախսեր | (1,366,981) | (1,103,324) |
| Հիմնական միջոցների մաշվածություն | (170,229) | (131,652) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | (16,252) | (21,925) |
| Այլ ծախսեր | (523,689) | (521,591) |
| Շահույթ մինչև հարկումը | 10,673,888 | 6,328,727 |
| Շահութահարկի գծով ծախս | (2,146,085) | (1,274,939) |
| Տարվա շահույթ | 8,527,803 | 5,053,788 |
| **Այլ համապարփակ ֆինանսական արդյունք** | | |
| **Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ փասում** | | |
| Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում | 24,593 | - |
| | 24,593 | - |
| **Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում** | | |
| **Իրական արժեքի պահուստի շարժ (պարտքային գործիքներ)** | | |
| Իրական արժեքի զուտ փոփոխություն տարվա ընթացքում | 6,535,856 | 3,977,785 |
| Փոխանցում շահույթին կամ վնասին | (4,385,532) | (1,695,643) |
| Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում | 238,564 | 43,962 |
| Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ | (430,000) | (456,429) |
| Հարկային դրույքի փոփոխության արդյունքում ճշգրտում | 274,981 | - |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ օգուտ | 2,233,869 | 1,869,675 |
| Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | 2,258,462 | 1,869,675 |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք | 10,786,265 | 6,923,463 |

# Statement of profit or loss and other comprehensive income

| In thousand Armenian drams | 2019 | 2018 |
|---|---|---|
| Interest and similar income | 22,701,678 | 18,252,054 |
| Interest and similar expense | (14,143,305) | (10,873,540) |
| Net interest income | 8,558,373 | 7,378,514 |
| Fee and commission income | 253,808 | 235,298 |
| Fee and commission expense | (131,698) | (122,542) |
| Net fee and commission income | 122,110 | 112,756 |
| Net trading income | 294,804 | 312,143 |
| Net gains on derecognition of financial assets measured at fair value through other comprehensive income | 4,272,379 | 1,695,643 |
| Other income | 272,157 | 113,702 |
| Impairment losses | (768,784) | (1,505,539) |
| Staff costs | (1,366,981) | (1,103,324) |
| Depreciation of property and equipment | (170,229) | (131,652) |
| Amortization of intangible assets | (16,252) | (21,925) |
| Other expenses | (523,689) | (521,591) |
| Profit before income tax | 10,673,888 | 6,328,727 |
| Income tax expense | (2,146,085) | (1,274,939) |
| Profit for the year | 8,527,803 | 5,053,788 |
| **Other comprehensive income:** | | |
| **Items that will not be reclassified subsequently to profit or loss** | | |
| Adjustment due to change in tax rate | 24,593 | - |
| | 24,593 | - |
| **Items that will not be reclassified subsequently to profit or loss** | | |
| **Movement in fair value reserve (debt instruments)** | | |
| Net change in fair value during the year | 6,535,856 | 3,977,785 |
| Reclassification to the statement of profit or loss | (4,385,532) | (1,695,643) |
| Changes in allowance for expected credit losses | 238,564 | 43,962 |
| Income tax relating to items that will be reclassified | (430,000) | (456,429) |
| Adjustment due to change in tax rate | 274,981 | - |
| Net gains on financial investments at fair value through other comprehensive income | 2,233,869 | 1,869,675 |
| Other comprehensive income for the year, net of tax | 2,258,462 | 1,869,675 |
| Total comprehensive income for the year | 10,786,265 | 6,923,463 |

# Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար ՀՀ դրամ | 31 դեկտեմբերի 2019թ. | 31 դեկտեմբերի 2018թ. |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 24,328,959 | 18,215,567 |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 2,072,086 | 3,677,170 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 96,611,921 | 73,630,277 |
| **Ներդրումային արժեթղթեր** | | |
| - Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | 67,487,498 | 42,040,559 |
| - Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | 60,572,411 | 56,495,115 |
| - Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր | 26,458,580 | 32,945,467 |
| Հիմնական միջոցներ | 1,989,716 | 1,986,277 |
| Ոչ նյութական ակտիվներ | 64,153 | 71,477 |
| Բռնագանձված ակտիվներ | 1,161,904 | 866,251 |
| Այլ ակտիվներ | 1,402,245 | 476,637 |
| Ընդամենը՝ ակտիվներ | 282,149,473 | 230,404,797 |
| **Պարտավորություններ և սեփական կապիտալ** | | |
| **Պարտավորություններ** | | |
| Պարտավորություններ ՀՀ ԿԲ նկատմամբ | 3,412,007 | 20,665,778 |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | 969 | - |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 47,734,267 | 29,126,454 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 120,840,386 | 93,895,419 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 32,489,020 | 27,173,064 |
| Ստորադաս փոխառություններ | 13,353,624 | 13,398,279 |
| Ընթացիկ հարկի գծով պարտավորություն | 1,143,955 | 436,400 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 2,408,573 | 2,395,810 |
| Այլ պարտավորություններ | 1,031,962 | 470,855 |
| Ընդամենը՝ պարտավորություններ | 222,414,763 | 187,562,059 |
| **Սեփական կապիտալ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 10,000,200 | 8,752,800 |
| Էմիսիոն եկամուտ | 6,205,548 | 1,347,241 |
| Գլխավոր պահուստ | 20,000,000 | 16,000,000 |
| Այլ պահուստներ | 12,765,206 | 10,506,744 |
| Չբաշխված շահույթ | 10,763,756 | 6,235,953 |
| Ընդամենը՝ սեփական կապիտալ | 59,734,710 | 42,842,738 |
| Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ | 282,149,473 | 230,404,797 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. մայիսի 8-ին՝

**Գևորգ Մաչանյան**
Գործադիր տնօրեն

**Սեդրակ Բաղդասարյան**
Գլխավոր հաշվապահ



# Statement of financial position

| In thousand Armenian drams | 31 December 2019 | 31 December 2018 |
|---|---|---|
| **Assets** | | |
| Cash and cash equivalents | 24,328,959 | 18,215,567 |
| Amounts due from financial institutions | 2,072,086 | 3,677,170 |
| Loans to customers | 96,611,921 | 73,630,277 |
| **Investment securities** | | |
| -Investment securities at fair value through other comprehensive income | 67,487,498 | 42,040,559 |
| -Investment securities at amortised cost | 60,572,411 | 56,495,115 |
| - Securities pledged under repurchase agreements | 26,458,580 | 32,945,467 |
| Property and equipment | 1,989,716 | 1,986,277 |
| Intangible assets | 64,153 | 71,477 |
| Repossessed assets | 1,161,904 | 866,251 |
| Other assets | 1,402,245 | 476,637 |
| Total assets | 282,149,473 | 230,404,797 |
| **Liabilities and equity** | | |
| **Liabilities** | | |
| Amounts due to CBA | 3,412,007 | 20,665,778 |
